

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Գազիկ Հարությունյան

**ՀՀ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

ԵՐԵՎԱՆ - 2002

Ներածություն

Հասարակության զարգացման ներկայիս փուլին բնորոշ է տեղեկատվական ոլորտի աննախադեպ զարգացում: Այսօր տեղեկատվական համակարգի զարգացման մակարդակից մեծապես կախված է ցանկացած պետության և ազգի քաղաքական, գաղափարախոսական, հոգեբանական, տնտեսական, ռազմական և այլ ոլորտների անվտանգությունն ու հետագա առաջընթացը: Տեղեկատվությունով հագեցման աստիճանը, ներառելով այս հասկացության մեջ առաջին հերթին *հասարակության ունեցած ընդհանուր գիտելիքների տեսակարար կշիռը, նրա ինտելեկտուալ հնարավորությունները*, պետության, ազգի մրցունակության ամենաարդիական չափանիշն ու հարատևման գրավականն է: Ըստ այս ամենի, տեղեկատվական գործոնի կարևորությունը ժամանակի հետ միայն աճելու է:

Սակայն տեղեկատվական համակարգը պետք է լինի այնպիսի վերնաշենք, որի հենքում դրված է ազգային գաղափարախոսությունը: Այդ գաղափարախոսությունը պետք է ներառի տվյալ ազգի բարոյական, կրոնական կամ, եթե ընդհանրացնենք՝ քաղաքակրթական արժեքների համակարգը, նրա հիմնական նպատակները և ուղենիշները: Խիստ կարևոր է, որ պետության տեղեկատվական կառույցները համապատասխանեն ազգի արժեքային համակարգին և չխաթարեն նրա ինքնությունը: Միայն այս վերջին հասկացության պահպանման պարագայում է, որ ազգը կարողանում է դրսևորել ստեղծագործելու ունակությունը, դիմադրելու կարողությունը: Այլ պարագայում, երբ տեղեկատվական համակարգը օտարածին է և չի համապատասխանում ազգային արժեքներին, այն կարող է խեղաթյուրել ազգի ինքնությունը և այդպիսով նպաստել ոչ թե առաջընթացին և բարգավաճմանը, այլ ազգի վերասերմանը և որոշակի պայմաններում, նաև նրա կործանմանը:

Քննարկելով Հայաստանի Հանրապետության տեղեկատվական համակարգը և նրա զարգացման ուղենիշները, անհրաժեշտ է հաշվի առնել նաև մեծաթիվ Սփյուռքի առկայությունը: Այն այսօր պակաս միատարր է, քան նախկինում, ինչը տեղեկատվական համագործակցության տեսակետից լուրջ խնդիրներ է առաջացնում: Միևնույն ժամանակ, Սփյուռքի տարբեր հատվածների առկայությունը՝ ռուսաստանյան, արևելյան և արևմտյան, զգալիորեն լայնացնում է ՀՀ-ի կողմից տեղեկատվական ճկուն քաղաքականություն վարելու հնարավորությունները:

Միևնույն ժամանակ, չնայած տեղեկատվական գործոնի կարևորությա-

նը, ներկայումս հանրապետությունում գործնականորեն բացակայում են հայրենական ծագման “Տեղեկատվություն” առարկային և հասկացությանը վերաբերող գրականություն կամ դասագրքեր: Սա հետևանքն է նաև նրա, որ առայժմ հանրապետությունը չունի իր տեղեկատվական անվտանգության հայեցակարգը, այսինքն այն հիմնական օրենսդրական ուժ ունեցող փաստաթուղթը, որտեղ պետք է ներկայացվեն այս բնագավառի հիմնախնդիրները, նրանց լուծման և զարգացման ուղիները, տեղեկատվության և այլ ոլորտների համագործակցության եզրերը: Ավելին, ցայսօր հանրապետությունում չի ընդունված *ազգային անվտանգության հայեցակարգը, որի բաղկացուցիչ մասը պետք է կազմի տեղեկատվական անվտանգության սկզբունքները:*

Վերոհիշյալ հանգամանքները միանշանակ վկայում են, որ այսօր ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրների ազգային անվտանգության համատեքստում ուսումնասիրելը ավելի քան հրատապ խնդիր է:

Այնուհայտ է, որ մեկ կամ անգամ մի շարք ուսումնասիրությունները բավարար չեն գոյություն ունեցող տեղեկատվական հիմնախնդիրներին սպառնիչ պատասխաններ տալու համար: ՀՀ տեղեկատվական դաշտը և համակարգը կարիք ունեն շարունակական և հետևողական ուսումնասիրությունների, որոնց հիման վրա հնարավոր կլինի իրագործել հիմնավորված զարգացումներ և բարեփոխումներ:

Ելնելով այդ նկատառումներից, ներկայիս հետազոտության սահմանները իրատեսորեն սահմանափակվել են ՀՀ տեղեկատվական համակարգի ցանցային և ՋԼՄ-ների բաղադրիչների մասնակի ուսումնասիրությամբ: Ուսումնասիրությունում հատուկ նշանակություն է տրվել այն հանգամանքին, որ զարգացումները տեղեկատվական դաշտում ընթանում են *գլոբալիզացիոն գործընթացների* դարաշրջանում: Այդ իսկ պատճառով, հաշվի առնելով գլոբալիզացիա հասկացության շուրջ ծավալված վեճերը, հաճախ իրարամերժ պատկերացումները, որոշակի տեղ է հատկացվել այդ հասկացության մեկնությանը՝ դիտարկելով տեղեկատվական տեխնոլոգիաները որպես գլոբալիզացիայի իրագործման հիմնական միջոց: Հիմնվելով այդ ոլորտի ուսումնասիրություններից ստացված եզրակացություններից, առաջարկվել է ՀՀ տեղեկատվական համակարգի ցանցային և ՋԼՄ բաղադրիչների զարգացման հնարավոր ուղիները և հեռանկարները, հենվելով ազգային անվտանգության մի քանի անվիճելի սկզբունքների վրա:

ԳԼՈՒԽ 1.

Տեղեկատվության դերը հասարակության պատմական զարգացման ընթացքում

Մարդու էության ամենաբնորոշ հատկանիշներից է նրա ձգտումը ճանաչել բնության՝ մարդկանց և իրերի էությունը, կամ այլ խոսքով՝ ձեռք բերել տեղեկատվություն՝ իրեն շրջապատող աշխարհի վերաբերյալ: Հենց այդ, իր ստացած տեղեկատվության պահպանման և հաղորդման անհրաժեշտությունն էր, որ հարկադրեց մարդկությանը ստեղծել առաջին գրերը: Եվ արդեն վաղ պատմական գրական հուշարձաններում մենք հանդիպում ենք տեղեկատվական գործողությունների նկարագրությունների, որոնք առ այսօր չեն կորցրել իրենց այժմեականությունը:

1.1. Տեղեկատվական գործողությունները անցյալում

Տեղեկատվական գործողության դասական օրինակ է Ոդիսևսի մշակած Տրոյայի գրավման ծրագիրը: Ինչպես հիշում ենք, հույները մոտ տասը տարի պաշարել էին այդ քաղաքը, սակայն գրավել այն ոչ մի կերպ չէին կարողանում: Եվ գուցե նրանց ջանքերն այդպես էլ ապարդյուն անցնեին, եթե Ոդիսևսը չհղանար մի տեղեկատվական գործողություն, որը թույլ տվեց հույներին հասնել հաջողության: Իր ծրագրի նախնական փուլում նա պատրաստել տվեց մի հսկայական փայտե ձի, (այն հետագայում ստացավ «տրոյական ձի» անվանումը), որի մեջ կարող էին տեղավորվել հույն զինվորները: Գործողության երկրորդ փուլում հույներն իրենց ունեցած չունեցածը բարձեցին նավերը և մեկնեցին Տրոյայից, բայց ոչ Հունաստան, այլ մոտակա կղզին՝ թողնելով ծովի ափին ձիուն և նրա մեջ թաքնված սպառազեն հույներին: Այդ փուլի կարևոր բաղադրիչ մասն էր նաև այն, որ Ոդիսևսը հատուկ առաջադրանքով նախապես Տրոյա է ուղարկում իր գործակալ Սինոնին:

Հաջորդ օրը տրոյացիները ուրախությամբ տեսան, որ ատելի հույները հեռացել են և հետաքրքրությամբ սկսեցին ուսումնասիրել նրանց թողած փայտե նժույգը: Այդ պահին հայտնված Սինոնը սկսում է հավատացնել տրոյացիներին, որ այդ ձին ոչ այլ ինչ է, քան աստվածուհի Աթենասի նվե-

րը նրանց, և որ տրոյացիները պետք է քանդեն քաղաքի պարիսպներն ու մծույզը մտցնեն քաղաք՝ պահպանելով այնտեղ նրան որպես սրբություն:

Տրոյացիները հավատում են սադրիչի հորդորանքներին և կատարում նրա խոսքերը: Մնացածն արդեն, ինչպես ընդունված է ասել մեր օրերում, տեխնիկայի հարց էր: Գիշերը փայտե մծույզից դուրս են գալիս զինվորները և վերացնում տրոյացի պարեկներին, իսկ մոտակա կղզուց վերադարձած հույները ներխուժում են քանդած պարսպից ներս: Տրոյան տապալվեց:

Ողիսևսի մշակած գործողությունը մտավ բազում տեղեկատվական պատերազմների վերաբերյալ դասգրքերի մեջ որպես քրեստոմատիկ օրինակ, թե ինչպես կարելի է տեղեկատվական գործողության մասնավոր դեպքի՝ ապատեղեկատվության միջոցով, հասնել ցանկալի արդյունքի:

Սակայն տեղեկատվությունը որպես համակարգված հասկացություն և ռազմավարական հայեցակարգի բաղադրիչ մաս, թերևս, առաջին անգամ ներկայացվել է չին ստրատեգ և փիլիսոփա Սուն Ցզիի (մ.թ.ա. 6-րդ դար) «Տրակտատ ռազմական արվեստի մասին» աշխատության մեջ: Եթե ընդհանրացնենք Սուն – Ցզիի հայեցակարգը, ապա թշնամու դեմ պայքարելիս առաջնայինը անուղղակի, հաճախ զուտ տեղեկատվական գործողություններն են, որոնց միջոցով պետք է հասնել նրան, որ «քայքայել այն ամեն լավ բանը, որ գույություն ունի թշնամու մոտ, ներքաշել նրա կարկառուն ներկայացուցիչներին հանցավոր արարքների մեջ, դարձնել նրանց խեղկատակ հասարակության առաջ, համագործակցության համար օգտագործել ամենանողկալի անձնավորությունների»:

Այդ ամենը իրագործելու համար անհրաժեշտ է ունենալ տեղեկատվություն, որը գնել, ըստ Սուն Ցզիի, պետք է լինել խիստ առատածեռն և ոչ մի դեպքում չխնայել միջոցները տեղեկատվություն ձեռք բերելիս: Հատկանշական է, որ Սուն Ցզիի հայեցակարգի հիմնական դրույթներից մեկը՝ «ստեղծիր հակառակորդի մոտ անկարգություն, քաոս և դու կհաղթես նրան», ներկայումս ընկած է ամերիկյան ՌԵՆԴ կորպորացիայի կողմից Պենտագոնի համար մշակված այսպես կոչված երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմների հայեցակարգի հիմքում, որին մենք դեռ կանդրադառնանք հետագայում:

Միևնույն պարագայում, պատմական անցյալում կատարված տեղեկատվական գործողությունները կրում էին մասնավոր բնույթ. նրանք առանձին զորավարների կամ քաղաքական գործիչների մտքի, ֆանտա-

զիայի արգասիքն էին՝ կապված որոշակի ռազմաքաղաքական իրողության հետ: Նրանք համակարգված բնույթ սկսեցին ստանալ 20-րդ դարի սկզբին՝ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ:

Այդ տարիներին էր, որ Մեծ Բրիտանիայում ստեղծվեց Տեղեկատվության մախարարությունը՝ լորդ Բիվերբրուկի ղեկավարությամբ, որի խնդիրն էր՝ վարել ակտիվ ագիտացիոն և պրոպագանդիստական աշխատանք Անտանտի հակառակորդ երկրների՝ Գերմանիայի և Ավստրո – Հունգարիայի դեմ: Այդ մախարարությունը լայնորեն օգտագործում էր ապատեղեկատվական գործողություններ Բրիտանական կայսրության կողմից վարվող ընդհանուր քաղաքականության համատեքստում: Այն դարձավ անգլիացի հայտնի գրող Ջորջ Օրվելլի հանրահայտ «1984» հակաուտոպիստական երկի մախատիպը: «Ճշմարտության մախարարության» դեկոր էր՝ «Ճշմարտությունը դա սուտն է, ոչ ճշմարտությունն է» հանրահայտ արտահայտությունը:

Հատկանշական է, որ Օրվելլն իր երկում կանխագուշակել էր նաև անձնական օգտագործման համակարգիչների գյուտը, որի միջոցով «Ճշմարտության մախարարության» աշխատակիցները շարունակաբար վերախմբագրում էին պատմությունը՝ ելնելով քաղաքական մոր իրադարձությունների տրամաբանությունից:

Անհրաժեշտ է հատուկ նշել, որ տեղեկատվական գործողությունների կարևորությունը լավ էին ըմբռնել նաև հայ քաղաքական գործիչները և զորավարները: Մասնավորապես, Գարեգին Նժդեհը կիրառության մեջ մտցրեց «ահավարություն» հասկացությունը, որն ավելի քան աղեկվատ արտահայտում է ժամանակակից տեղեկատվական պատերազմների բաղադրիչ մաս կազմող հոգեբանական գործողությունների էությունը:

Տեղեկատվական տեխնոլոգիաներն էլ ավելի զարգացան երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Բնորոշ է, որ եթե տոտալիտար հասարակարգ ունեցող երկրներում՝ Գերմանիայում և ԽՍՀՄ-ում, ագիտացիոն և պրոպագանդիստական աշխատանքը վարվում էր սեփական կարգերի գովերգման ու հակառակորդի ուժի և հնարավորությունների նսեմացման, հաճախ նրանց որպես խեղկատակներ ներկայացնելու ճանապարհով, ապա ազատական անգլո-ամերիկացիները տանում էին այլ քաղաքականություն:

Նրանք լուրջ էին մոտենում իրենց հակառակորդներին, ներշնչում էին իրենց քաղաքացիներին ավելի շուտ գերազնահատել թշնամուն, քան թե-

րագնահատել: Հատուկ ծառայություններում ստեղծվեցին բաժիններ, որոնք մասնագիտացել էին տեղեկատվական գործողություններ կազմակերպելու բնագավառում: Այսօր դասական են համարվում անգլոամերիկյան դաշնակիցների լայնածավալ ապատեղեկատվական գործողությունները, որոնց նպատակն էր մոլորեցնել գցել գերմանական զինված ուժերի հրամանատարությանը՝ կապված դաշնակիցների ուժերի ակի իջեցման հետ Սիցիլիայում և հետագայում նաև Նորմանդիայում՝ 1944թ. ամռանը: Բավական նաև նուրբ էին կազմակերպում նրանք իրենց աշխատանքը ազիտացիոն՝ պրոպագանդիստական ոլորտում:

Օրինակ, ելնելով իրենց դիտարկումներից, անգլոամերիկյան դաշնակիցները մշակել էին մի շատ խորամանկ ձև՝ հակահիտլերյան գրականություն տարածելու համար: Երբ դաշնակիցների ինքնաթիռները ռմբակոծում էին գերմանական զնացքները, նրանք ռումբերի հետ միասին նետում էին հակահիտլերյան բովանդակությամբ թերթերով լի ծրարներ: Ծրարների վրա գրված էին լինում հասցեներ, որոնք հետախուզական ծառայությունները ձեռք էին բերում հեռախոսային տեղեկատուներով կամ այլ ճանապարհներով:

Ռմբակոծություններից հետո բժախնդիր և հետևողական գերմանացիները հավաքում էին այդ ծրարները և ուղարկում հասցեատերերին: Ստացված ազդեցությունը կրկնակի էր: Թիկունքում գտնվող գերմանացիների վրա ազդում էին և՛ թերթերի բովանդակությունը, և՛ հատկապես այն փաստը, որ այդ թերթերը ստանում էին գերմանացի փոստատարների միջոցով:

Հենց այդ պատերազմական ժամանակահատվածում անգլոամերիկյան քաղաքական մարմինները և հատուկ ծառայությունները սկսում են ավելի ու ավելի խոր ուսումնասիրել վերը հիշատակված չին ստրատեգիան Ցզիի հայեցակարգը և գործնական հետևություններ կատարել: Երկրորդ աշխարհամարտի ավարտը մարդկությանը բերում է ոչ թե խաղաղություն, այլ ազդարարում է նոր, ավելի գլոբալ հակամարտություն Արևմուտքի և Արևելքի միջև, որը մարմնավորում են ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը՝ իրենց դաշնակիցներով: Նրանց միջև ծագում են մի նոր տիպի պատերազմական հարաբերություններ, որն ԱՄՆ - ի դիվանագետ Ջ.Քենան դիպուկ անվանումով կոչում է «Սառը պատերազմ»:

Այդ պատերազմում, որի հենքն էր կազմում լիբերալ և կոմունիստական գաղափարախոսությունների հակամարտությունը և դրանից բխող մր-

ցակցությունը մարդկային գործունեության բոլոր ոլորտներում, խիստ աճում է տեղեկատվական գործողությունների դերը: Ավելին՝ համաձայն որոշ քաղաքագետների՝ «Սառը պատերազմում» ԽՍՀՄ-ի կրած պարտությունը հիմնականում պայմանավորված էր հենց տեղեկատվական ոլորտում ԱՄՆ-ի ձեռք բերած հաջողությունների և սոցիալիստական ճամբարի այդ ոլորտում ունեցած թերությունների և թույլ տված սխալների պատճառով:

1.2. Տեղեկատվական գործողությունները «Սառը պատերազմի» տարիներին

Հետպատերազմյան դարաշրջանի համար, թերևս, ամենաբնորոշիչ հանգամանքն այն էր, որ մարդկությունը տիրապետեց միջուկային զենքին: Միևնույն ժամանակ մեծ տերությունների ղեկավարությունը արագ կողմնորոշվեցին և հասկացան, որ նման զենքի անգամ միակողմանի օգտագործումը կործանարար կլինի ողջ մարդկության համար և հավասարազոր է ինքնասպանության: Ըստ ամենայնի, հենց դա էր պատճառը, որ ԱՄՆ-ԽՍՀՄ հակամարտության առաջին պլան մղվեցին միմյանց նկատմամբ իրագործվող ոչ պատերազմական (ռազմական գործողությունները վարվում էին հիմնականում այլ երկրների տարածքներում և այլ ժողովուրդների ձեռքերով), այսպես կոչված՝ անուղղակի գործողություններ: Այդ գործողությունների հիմնական նպատակն էր ջլատել, կազմալուծել հակառակորդի հոգևոր, մտավոր ու նյութական կարողությունները: Եվ եթե վերջինիս համար ավելի հաճախ գործածվում էին տնտեսական պատերազմների միջոցները, ապա մարդու հոգեկանի, նրա գիտակցության (ինչը, անշուշտ, առաջնային է) վրա ազդելու հիմնական ճանապարհը տեղեկատվական գործողություններն էին:

Ինչպես արդեն նշել ենք, այդ բնագավառում առավել հաջողությունների հասավ ԱՄՆ-ը, որը պատերազմից հետո ստեղծած իր ազգային անվտանգության հայեցակարգում և Ազգային անվտանգության խորհրդի ընդունած բազմաթիվ դոկտրինալ բնույթ կրող փաստաթղթերում հաստատագրեց տեղեկատվական գործունի կարևորությունը ԽՍՀՄ-ի դեմ վարվող հակամարտության մեջ:

Հակառակորդի գիտակցության դեմ մղվող տեղեկատվական գործողությունների նպատակը և էությունը բացահայտող ամենացայտուն օրինակ-

ներից է 1945թ. ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՅՐ) ապագա ղեկավար Ալլեն Դալլեսի ելույթը ԱՄՆ կոնգրեսում.

«Ռուսաստանում քառս սփռելով՝ մենք աննկատ կփոխենք նրանց իրական արժեքները կեղծերով և կստիպենք նրանց հավատալ այդ կեղծ արժեքներին: Ինչպես: Մենք հենց Ռուսաստանում կգտնենք մեր համախոհներին, դաշնակիցներին և օգնականներին: Քայլ առ քայլ կխաղարկվի աշխարհի ամենամահնազանդ ժողովրդի կործանման, նրա ինքնագիտակցության անհակադարձելի և վերջնական հանգեցման ահռելի մասշտաբների ողբերգությունը: Գրականությունից և արվեստից մենք աստիճանաբար դուրս կմղենք նրա սոցիալական էությունը: Յետ կսովորեցնենք նկարիչներին, դուրս կմղենք նրանց մոտից ժողովրդի խորքում կատարվող գործընթացների պատկերման և ուսումնասիրության ցանկությունը: Գրականությունը, թատրոնները, կինոն՝ պետք է պատկերեն և փառաբանեն միայն մարդկային ամենագագրելի զգացումները:

Մենք պետք է օգնենք և բարձրացնենք այսպես կոչված ստեղծարարներին, որոնք կսկսեն սերմանել, ներարկել մարդկային գիտակցության մեջ սեքսի, բռնության, սադիզմի, դավաճանության, այլ խոսքով՝ ցանկացած անբարոյականության պաշտամունք: Պետության ղեկավարության մեջ մենք քառս և անկարգություն կստեղծենք: Մենք աննկատ, բայց ակտիվ և մշտական կօժանդակենք չինովնիկների հիմարությանը, կաշառակերությանն, անսկզբունքայնությանը: Բյուրոկրատիզմը և քաշքշուկը կհամարվեն բարիք: Ազնվությունը և օրինավորությունը կծաղրվեն, կդառնան անցյալի մնացուկ ու ոչ մեկին այլևս պետք չեն լինի: Ստահակությունն ու հանդգնությունը, սուտն ու կեղծիքը, հարբեցողությունն ու թմրամոլությունը, անասնական վախը միմյանց հանդեպ ու անամոթությունը, դավաճանությունն ու ժողովուրդների թշնամությունը, առաջին հերթին թշնամությունն ու ատելությունը դեպի ռուս ժողովուրդը՝ այդ ամենը մենք ճարպկորեն և աննկատ կսերմանենք: Եվ միայն քչերը, շատ քչերը կենթադրեն կամ կհասկանան, թե ինչ է կատարվում: Բայց նման մարդկանց մենք կդնենք անօգնական վիճակի մեջ, կդարձնենք խեղկատակ: Կգտնենք միջոցներ՝ նրանց զրպարտելու և հասարակության տականք հայտարարելու»:

Նման մոտեցումը, որը փաստորեն կրկնում է Սուև Ցզիի դրույթները և այդ իսկ պատճառով կարելի է անվանել «Սուև Ցզի-Դալլեսի» դոկտրին, լայն ընդունելություն գտավ ամերիկյան քաղաքական շրջանակներում: Այն դարձավ ԱՄՆ –ի ընդհանուր քաղաքականության գլխավոր բաղադ-

րիչներից մեկը: Ամերիկյան զինված ուժերում ստեղծվեցին հատուկ ստորաբաժանումներ, որոնք մասնագիտացել են տեղեկատվական և հոգեբանական գործողություններ վարելու մեջ: Տեղեկատվական ազդեցությունը հակառակորդի վրա վերածվում է գործոնի, որն անպայմանորեն պետք է հաշվի առնի քաղաքականության բոլոր ոլորտներում:

Հիսնական թվականներին Յենի Բիսիմյեթի մշակած ԱՄՆ-ի միջուկային զենքի վերաբերյալ հայեցակարգի հիմքում ընկած են հակառակորդի վրա հոգեբանական ճնշում կիրառելը և նրան շանտաժի ենթարկելը, կարելի է ասել այն «ահավարությունը», որ դեռ 30-ական թվականներին մշակել էր Գարեգին Նժդեհը: Երբ 1975 թվականին ԱՄՆ նախագահ Ռ.Նիքսոնը Ջ. Բուշ ավագին նշանակում էր ԿՅՐ-ի տնօրեն, նա իր մաղթանքի խոսքերում շեշտում է. «Հատուկ ուշադրություն դարձրեք չին ստրատեգ Սուև Ցզիի տեսությանը», որում, ըստ Նիքսոնի, ամենակարևորը «հակառակորդին ղեկավարելու» դրույթն է:

«Սառը պատերազմի» արդեն սկզբնական տարիներին կտրուկ աճում է նաև մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության (այն, ինչ 70-ականներին կստանա զանգվածային լրատվության միջոցներ - ՋԼՄ անվանումը) դերը քաղաքականության մեջ: Այդ բոլորը նախերգանք են 90-ական թվականներին կյանք մտած այսպես կոչված «տեղեկատվական պատերազմների», որոնց վրա է հիմնված այսօրվա ողջ քաղաքականությունը: Ինչպես նշում է ամերիկացի քաղաքագետ Ջորջ Սոեյնը՝ «Տեղեկատվական պատերազմի» նպատակը գիտակցությունն է, հատկապես նրանց գիտակցությունը, ովքեր ընդունում են հանգուցային որոշումներ պատերազմի և խաղաղության վերաբերյալ, իսկ ռազմական տեսակետից նրանց գիտակցությունը, ովքեր ընդունում են հանգուցային որոշումներ՝ երբ և ինչպես օգտագործել (կամ չօգտագործել) եղած ուժերը և ստրատեգիական կառուցվածքները: Կարելի է համարել, որ «Սառը պատերազմի» այնպիսի ասպեկտներ, ինչպիսիք են «Ազատություն» կամ «Ամերիկայի ձայն» ռադիոկայանը, տեղեկատվական պատերազմի գլխավոր փորձարկումներն էին»:

Միաժամանակ, տեղեկատվության գործոնի նշանակության աճը ռազմա-քաղաքական ոլորտում պայմանավորվում է հասարակության մեջ կատարվող փոփոխություններով: Այդ փոփոխությունները նշանավորվում են «հետինդուստրիալ», «տեղեկատվական հասարակության» առաջացմամբ և դրան զուգահեռ ընթացող գլոբալիզացիոն գործընթացներով:

ԳԼՈՒԽ 2

Տեղեկատվական հասարակություն եվ գլոբալիզացիա

Հատկանշական է, որ դեռևս 80-ական թվականներին հրատարակված բառարաններում բացակայում էին «տեղեկատվական հասարակություն» և «գլոբալիզացիա» հասկացությունները: Մասնավորապես, գլոբալիզացի արտահայտությունը սկսել է լայնորեն կիրառվել Սառը պատերազմի ավարտից հետո և ներկայումս ունի բազմաթիվ, հաճախ իրարամերժ բացատրություններ: Բայց բոլոր պարագաներում, գլոբալիզացիոն գործընթացները, անկախ իրենց մեկնություններից, ունեն մեկ օբյեկտիվ բաղադրիչ, ըստ որի երկրագունդը մի համակարգ է, որտեղ հեռավորությունները կրճատված են հաղորդակցության էլեկտրոնային միջոցների: Այսինքն, գլոբալիզացիա հասկացության հիմքում դրված են նաև տեղեկատվական տեխնոլոգիաները և անշուշտ ինքը՝ տեղեկատվությունը:

Միևնույն ժամանակ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն իր հերթին ենթադրում է փոփոխություններ հասարակության սոցիալական, գաղափարական դաշտում, նրա կացութաձևում: Ելնելով այդ չափանիշներից՝ ներկայիս հասարակությունը, համաձայն որոշ հասարակագետների, ընդունված է անվանել տեղեկատվական:

2.1 Տեղեկատվական հասարակություն

«Տեղեկատվական հասարակություն» հասկացությունը սկսել է ձևավորվել անցյալ դարի 60-ական թվականների վերջից: Իսկ «տեղեկատվական հասարակություն» դարձվածքը առաջին անգամ գործածվել է Տոկիոյի Տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսոր Յու.Հայաշին՝ ճապոնիայի կառավարության կողմից պատվիրած հետազոտություններ կատարելու ժամանակ («Японское информационное общество: темы и подходы» Japan's Information Society: Themes and Visions», 1969): Այդ հետազոտությունների նպատակն էր ուսումնասիրել նոր զարգացող համակարգչային տեխնոլոգիաների ազդեցությունը հասարակության վրա:

Այդ հաշվետվություններում տեղեկատվական հասարակությունը բնու-

թագրվում էր որպես մի հասարակություն, որտեղ համակարգչայնացումը հնարավորություն էր ընձեռում մարդկանց օգտվել տեղեկատվության հուսալի աղբյուրներից, ձերբազատել նրանց ամենօրյա տաղտուկ աշխատանքներից, ապահովել արտադրության ավտոմատացման բարձր մակարդակ: Ենթադրվում էր, որ այդ պարագաներում պետք է փոխվի նաև հենց բուն արտադրական պրոցեսը՝ նրա արգասիքը՝ ապրանքը պետք է դառնա «տեղեկատվապես ավելի ծավալուն»: Այդ բառի տակ հասկացվում է, որ պետք է նրա արժեքի, գնագոյացման մեջ աճեն նորարարության, դիզայնի և մարքեթինգի մասնաբաժինները:

Համաձայն այս նոր գաղափարախոսության հիմնադիրներից մեկի՝ Մասուդայի, «հասարակության զարգացման շարժիչ ուժն է լինելու ոչ թե նյութական, այլ տեղեկատվական աշխատանքի արդյունքի՝ ապրանքի ստեղծումը»: Ավելին, «ինֆորմացիոն հասարակություն» հասկացության հիմնադիր հայրերին սկզբնական փուլում թվում էր, թե նման հասարակությունում չեն լինելու դասակարգեր և հակասություններ, սակայն այդ գաղափարները բավական ուտոպիստական բնույթ ունեին: Ըստ նրանց մտահղացումների, նման հասարակությունը պետք է լինի համերաշխության հասարակություն, ոչ մեծ կառավարությունով և փոքր պետական ապարատով:

Մասուդան էր, որ, ի տարբերություն ինդուստրիալ հասարակության, որի բնորոշիչ արժեքը ապրանքների սպառումն է, տեղեկատվական հասարակության բնորոշիչ արժեքն է ժամանակը: Այդ իսկ պատճառով նման հասարակությունում խիստ աճում է կուլտուրական ժամանցի մշակությունը: Տեղեկատվական հասարակության ճապոնական տարբերակը մշակվում էր առաջին հերթին ճապոնիայի տնտեսական խնդիրները լուծելու համար: Այս հանգամանքը պայմանավորում էր այդ գաղափարախոսության սահմանափակ և կիրառական բնույթը:

Սակայն 70-ական թվականներին տեղի է ունենում կոնվերգենցիա միաժամանակ ծնվող և զարգացող երկու գաղափարախոսությունների՝ տեղեկատվական հասարակության և հետինդուստրիալիզմի կոնվերգենցիան, փոխազդեցությունը: Պոստինդուստրիալիզմի գաղափարը առաջ է քաշվել Դանիել Բելի կողմից: Նրա 1973թ. հրատարակած «Հետինդուստրիալ հասարակության հարձակումը. սոցիալական կանխագուշակման փորձ» (Bell D. The ?oming of Post-industrizl Society. A Venture in Social

Forecasting. N.Y., Basic Books, Inc., 1973). աշխատությունում առավել լայնորեն ներկայացված է հետինդուստրիալիզմի հայեցակարգը:

Դ.Բելը, մարդկային հասարակության պատմությունը բաժանելով երեք մասի՝ ագրարային, ինդուստրիալ և հետինդուստրիալ, հիմնականում հենվում էր ինդուստրիալ հասարակության տեսություններին և բնութագրիչներին: Նա մեկնաբանում է ինդուստրիալ հասարակությունը որպես մի հասարակություն, որը կազմակերպվում է ապրանքարտադրության և արտադրամիջոցների շուրջը: Դ.Բելը շեշտում է, որ ինդուստրիալ հասարակությունը ընդգրկում է տարբեր երկրներ, որոնք կարող են հակադիր քաղաքական համակարգ ունենալ, տարբեր անցյալ ու ներկա: Յենց հասարակության ինդուստրիալ բնույթն է, որ կամխորոշում է նրա սոցիալական կառուցվածքը, ներառյալ մասնագիտությունների համակարգը և սոցիալական շերտերը:

Սոցիալական կառուցվածքը, ըստ Բելի, «վերլուծաբանորեն անջատվում է» հասարակության քաղաքական և մշակութային չափումներից, նրա հարթություններից: Համաձայն Բելի, 20-րդ դարի կեսերին սոցիալական կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունները վկայում են այն մասին, որ ինդուստրիալ հասարակությունը էվոլուցիոն կարգով ձգտում է հետինդուստրիալի, որը և պետք է դառնա որոշիչ սոցիալական ձև 21-րդ դարի համար, առաջին հերթին ԱՄՆ-ում, Ճապոնիայում, Ռուսաստանում և Արևմտյան Եվրոպայում:

Հետինդուստրիալ փուլին բնորոշ է անցումը ապրանքարտադրությունից ծառայությունների արտադրություն, և այդ ծառայություններն առաջին հերթին կապված են առողջապահության, կրթության, գիտական հետազոտությունների և կառավարման հետ: Հետինդուստրիալ հասարակության այդ բնութագիրը սերտորեն կապված է մասնագիտությունների բաշխման հետ: Նկատվում է նաև մտավորականության, պրոֆեսիոնալների և «տեխնիկական խավի» աճ: Նման հասարակությունում կենտրոնական և գլխավոր տեղ է գրավում եղած գիտելիքների բնույթը:

Եթե ինդուստրիալ հասարակությունում մարդիկ և մեքենաները կազմակերպվում և համախմբվում են ապրանքներ արտադրելու համար, ապա հետինդուստրիալ հասարակությունում կենտրոնական տեղ են գրավում գիտելիքները, այն էլ՝ տեսական բնույթի: «Իհարկե, գիտելիքներն անհրաժեշտ են ցանկացած հասարակության համար, գրում է Բելը, բայց հետին-

դուստրիալ հասարակության բնորոշ գիծն է հենց գիտելիքների բնույթը»:

Որոշումների ընդունման և փոփոխությունների ուղղորդման համար կարևորագույն նշանակություն է ձեռք բերում տեսական գիտելիքների կենտրոնական դերը, ինչը ենթադրում է տեսության առաջնությունը էմպիրիզմի նկատմամբ: Ցանկացած ժամանակակից հասարակություն ապրում է նորարարությունների շնորհիվ, նա փորձում է կանխագուշակել և պլանավորել իր ապագան:

Տեսական գիտելիքների փոխակերպումը նորարարությունների աղբյուրի հնարավոր է արդյունաբերության գիտատար այնպիսի ճյուղերի միջոցով, ինչպիսիք են՝ քիմիական արդյունաբերությունը, հաշվիչ տեխնիկան, էլեկտրոնիկան և օպտիկան: Ժամանակին Բելի վրա մեծ տպավորություն են գործել տնտեսագետ Կենյասի մշակած դրույթները, համաձայն որոնց հնարավոր է դառնում կառավարության միջամտությունը տնտեսությունում և այն պրակտիկ միջոցառումները, որոնք 20-րդ դարի երեսունական թվականներին իրագործեց Ռուզվելտը ամերիկյան տնտեսությունը դեպրեսիայից հանելու համար:

Այդ երևույթները, համաձայն Բելի, չափանիշ են դառնում այն, որ տեսական բնույթ կրող տնտեսագիտական հայեցակարգերը կարող են որոշիչ դեր կատարել պետական կառավարման և կիրառական բնույթի տնտեսագիտության մեջ: Գիտության, տեխնիկայի և տնտեսության միացումը արտահայտություն են գտնում ԳՅՄ (գիտական հետազոտություններ և մշակումներ) երևույթում: Դրանք, Բելի կարծիքով, պետք է ավելի և ավելի կարևոր դեր խաղան դեպի ապագա ուղղորդված հասարակության մեջ: Ի դեպ դեպի ապագա ուղղվածությունը, հետինդուստրիալ հասարակության ևս մեկ հատկանիշ է, որը ենթադրում է վերահսկողություն տեխնոլոգիաների վրա, տեխնոլոգիական կանխագուշակման մոդելների մշակում:

Եվ վերջապես, Բելը համարում էր, որ հետինդուստրիալ հասարակության էական բնութագրիչն են նոր ծնված ինտելեկտուալ տեխնոլոգիաները, որոնք օգտագործվում են ղեկավարման ժամանակ որոշումներ ընդունելիս: Նա գտնում էր, որ 20-րդ դարի վերջին ինտելեկտուալ տեխնոլոգիաները մարդկության կյանքում պետք է կատարեն նույնքան կարևոր դեր, որքան կատարել են մեխանիկական տեխնոլոգիաները անցած մեկուկես դարում: Ինտելեկտուալ տեխնոլոգիաները ենթադրում են օգտագործել ալգորիթմներ՝ ինտուիտիվ դատողությունների փոխարեն: Այդ ալգո-

րիթմները կարող են գործածվել համակարգչային ծրագրերի կամ հրահանգների տեսքով, որոնք հիմնված են որոշակի մաթեմատիկական բանաձևերի վրա:

Միևնույն ժամանակ, ինքը՝ Բելը, գտնում է, որ նման նպատակների գործնականում անհնար է հասնել, և դրանք ուտոպիստական են, քանի որ մարդը իր էությանը իռացիոնալ է և դիմադրում է ռացիոնալին: Սակայն մարդկության առաջխաղացումը այդ ուղղությամբ հնարավոր է, քանի որ, այնուամենայնիվ, մարդուն ռացիոնալիզմի գաղափարը լրիվ խորք չէ: Եթե ինտելեկտուալ տեխնոլոգիաներում «վարպետի» դերը կատարում է որոշումների ընդունման տեսությունը, ապա «գործիքի» դերը կատարում է համակարգիչը: Առանց համակարգչի օգտագործման նոր մաթեմատիկական միջոցների օգտագործումը անհնար է: Հենց համակարգիչներն են, որ թույլ են տալիս կատարել զգալի քանակի գործողություններ, ինչը հնարավոր է դարձնում ինտելեկտուալ տեխնոլոգիաների զարգացումը:

Հետինդուստրիալ հասարակությունում տնտեսության զարգացմանը վերաբերող հիմնական որոշումները պետք է ընդունի կառավարությունը, բայց դրանք պետք է հիմնավորվեն իրենց իսկ կողմից հովանավորվող գիտական հետազոտությունների, մշակումների և վերլուծությունների վրա: Նշենք, որ Բելի այս կանխատեսումները տեխնոլոգիապես առաջատար երկրներում զգալիորեն իրագործվել են: Մասնավորապես, Միացյալ Նահանգներում որոշումները ներքին և արտաքին քաղաքականության ոլորտում ներկայումս մեծ չափով ընդունվում են, այսպես կոչված, «ուղեղային տրեստների» մշակած նախագծերի և ծրագրերի հիման վրա:

Ժամանակի հետ Դ.Բելը զարգացնում է իր իսկ մտահղացումները, նոր դրույթներում ներկայացնելով հետինդուստրիալ և տեղեկատվական հասկացությունների փոխազդեցությունը՝ կոնվերգենցիան: Այդ գաղափարները նա ներկայացնում է 1980թ. հրատարակած «Տեղեկատվական հասարակության սոցիալական սահմանները» մենագրությունում:

«Տեղեկատվական հասարակություն» արտահայտությունը՝ հետինդուստրիալ հասարակության նոր անվանումն է, որը շեշտում է ոչ թե հասարակության զարգացման հերթականությունը՝ հետինդուստրիալ և հետո նոր տեղեկատվական, այլ ընդգծում է հետինդուստրիալ հասարակության հիմնական սոցիալական կառուցվածքը՝ տեղեկատվությունը: Ի տարբերություն իր նախկին մոտեցումների՝ այս աշխատությունում Դ.Բելը

էլեկտրոնային հաշվիչ տեխնիկան դիտարկում է ոչ թե որպես գիտատար բնագավառ և անհրաժեշտ միջոց կառավարման բարդ խնդիրներ լուծելու համար, այլ այդ տեխնիկան դիտարկում է փոխազդեցության մեջ կապի և հաղորդակցման միջոցների հետ միասին:

Գիտելիքները և տեղեկատվությունը Բելը համարում է ոչ միայն հետինդուստրիալ հասարակության զարգացման և փոխակերպման անհրաժեշտ տարր, այլ նաև նման հասարակության ռազմավարական ռեսուրս:

Տեղեկատվական հասարակության գաղափարախոսության սահմաններում ի հայտ եկան այն ուղղությունները և տեղեկանքները, որոնք սևեռում են հասարակության ուշադրությունը տեղեկատվության և նրա հաղորդման, մշակման և պահպանման տեխնիկական միջոցների նկատմամբ: Դրանք կարող են լինել և՛ դրական, և՛ բացասական:

Միևնույն ժամանակ, եթե Բելի աշխատություններում մի կողմից շեշտը դրվում է պետության կողմից տնտեսության կարգավորման օրենսդրական նախաձեռնությունների վրա, որոնք ապահովում են ազատ մուտք տեղեկատվության ճեմարաններ, իսկ մյուս կողմից արգելում են քաղաքական և ոստիկանական հետապնդումները անձի նկատմամբ կատարյալ տեղեկատվական տեխնիկայի միջոցով: Ի լրացումն դրա, Ֆրանսիացի սոցիոլոգ Ժ.Եյուլը գտնում է, որ տեղեկատվական հասարակությունը, լինելով սոցիալիստական, անարխիստական և պացիֆիստական գաղափարների իրագործող, ենթադրում է կենտրոնացված բյուրոկրատական պետության վերացում:

Հետինդուստրիալ տեղեկատվական հասարակության գաղափարախոսությունն ունեցել է և ունի բազմաթիվ կողմնակիցներ և ընդդիմախոսներ: Ուշագրավ է, որ եթե Բելը նման հասարակությունում տարանջատում է սոցիալական կառուցվածքը քաղաքական և մշակութային համակարգից, ապա Ջրիգն Բժեզինսկին նոր տեխնիկական դարաշրջանի գալուստը համարեց մի լրացուցիչ հնարավորություն՝ կազմալուծելու ԱՄՆ-ի հակառակորդներին, մասնավորապես Խորհրդային Միությանը՝ համապատասխան քաղաքականություն վարելու պարագայում (տես՝ Brzezinsky Z. Between Two Ages. America's Role in the Technotronic Era. N.Y.: The Viking Press, 1970).

Հետինդուստրիալ տեղեկատվական հայեցակարգին քննադատական մոտեցում ցուցաբերեցին հասարակագետներ Ս.Նորը և Ա. Մինկը: Նրանք

իրենց «Будет ли компьютеризованное общество обществом культурных конфликтов» աշխատության մեջ գտնում են, որ համակարգչայնացումը հանգեցնում է բավական պարզունակացված, բայց միասնական լեզվի: Իհարկե, նման լեզուն ինչ որ տեղ նպաստում է մշակութային անհավասարության հաղթահարմանը: Միևնույն ժամանակ, այդ պարզունակացված համակարգչային լեզուն պետք է զարգանա և դառնա առավել զարգացած խավերի համար հաղորդակցման միջոց: Սակայն ակնհայտ է, որ այդպիսի զարգացումները առաջ կբերեն նման տեղեկատվական դարձվածքային դաշտից դուրս մնացած սոցիալական խմբերի դժգոհությունը:

«Քննադատական սոցիոլոգիայի» ներկայացուցիչ Ս.Պոստերը (Poster M. The Mode of Information: Poststructuralism and Social Context. Cambridge: Polity Press, 1990) գտնում է, որ Դ.Բելի հայեցակարգի հիմնական թերությունն այն է, որ չնայած նա ձգտում է սահմանափակել հետինդուստրիալ հասարակության բնագավառը միայն սոցիալ տնտեսական կառուցվածքի մակարդակով, սակայն, այնուամենայնիվ, տեղադրում է մեկ՝ հետինդուստրիալ հասարակություն, սահմանման մեջ բոլոր տնտեսական, քաղաքական և մշակութային գործոնները, որի հետևանքով նոր երևույթների սահմանումները դառնում են սահմանումներ ողջ հասարակության համար:

Ըստ Պոստերի, Բելի սահմանումը, որ գիտելիքը հանդիսանում է անկախ փոփոխական հետինդուստրիալ հասարակությունում և որով պայմանավորվում են մնացած փոփոխականները՝ ինչպիսիք են աշխատանքը և կապիտալը, միայն կարող է հիպոթեզ լինել և ոչ ավելին: Այն պարագայում, երբ Բելը այն ներկայացնում է որպես հետևություն:

Սակայն պետք է նշել, որ Դանիել Բելի անգամ ամենակոշտ ընդդիմադիրները կասկածի տակ չէին առնում տեղեկատվական գործոնի դերն ու կարևորությունը հասարակական կյանքում: Միևնույն ժամանակ, տեղեկատվական ոլորտի զարգացումը հանգեցրեց և աշխարհաքաղաքական մոտեցումների յուրահատուկ զարգացումների, որոնցից, անշուշտ, առաջին հերթին պետք է նշել այն գործընթացները, որոնք հայտնի են գլոբալիզացիա անվան տակ:

2.2. Գլոբալիզացիա

Գլոբալիզացիա դարձվածքը առաջին անգամ կիրառել է Ջ. Մակլինը 1981 թ., երբ իր մի հետազոտությունում փորձում էր բացատրել սոցիալական փոխկապակցությունների ուժեղացման դրոպապատճառները աշխարհում: Միևնույն ժամանակ, որպես գաղափարախոսական կատեգորիա, գլոբալիզմը հենվում է լիբերալիզմի հիմնադրույթների վրա: Այդ ենթատեքստում ուշագրավ է մոնոփալիզմի գաղափարներից դեպի գլոբալիզմ կատարված էվոլուցիան:

Գլոբալիզացիան տեղեկատվական համակարգի հիմնախնդիրների ուսումնասիրության տեսանկյունից դիտարկվում է որպես արագ ընթացող գործընթաց, որը տանում է դեպի միասնական համաշխարհային ֆինանսատնտեսական տարածության ձևավորման: Սակայն նշենք, որ այդ տարածությունը միտում ունի լինել միասնական՝ թերևս միայն քաղաքական և տնտեսական կառավարելիության տեսակետից: Իրականում այն խիստ անհամասեռ է և շերտավորված:

Ավելին, վերջին ժամանակահատվածում պարզորոշ են դարձել մեկուսացման գործընթացները «հետինդուստրիալ» աշխարհում: Բավական է նշել, որ համաձայն Ինոզեմցեի տվյալների (տես՝ Иноземцев И.Л. Расколота цивилизация.-М.: Academia-Найка, 1999), արևմտյան տերություններին 90-ական թվականների վերջին բաժին էր ընկնում՝

- ուղղակիորեն կատարվող արտասահմանյան ներդրումների 76 % -ը
- միջազգային առևտրի ծավալի 73 % -ը
- աշխարհում գրանցվող բոլոր պատենտների և հայտնագործությունների 88 % -ը
- ինտերնետ գլոբալ ցանցից օգտվողների ավելի քան 90% -ը

Այսպիսով, եթե գլոբալիզացիան դիտարկենք որպես տնտեսական, տեխնոլոգիական, սոցիալական ստանդարտների սահմանների վերացման գործընթաց, ապա դժվար չէ համոզվել, որ այն իրականում ավելի շուտ ռեգիոնալ, քան համաշխարհային երևույթ է: Այսինքն, կարելի է ասել, որ սահմանների (այս հասկացության լայն մեկնաբանման պարագայում) վերացումը բնորոշ է միայն տնտեսապես զարգացած երկրներին:

Մինչդեռ, տեղի ունեցող գլոբալ փոփոխությունները տեղեկատվական և ֆինանսական ոլորտում ոչ միայն չեն վերացնում արդեն իսկ գոյություն

ունեցող համաշխարհային քաղաքական և տնտեսական տարածությունը բաժանող խոչընդոտները, այլև հանգեցնում են նոր, էլ ավելի դժվար հաղթահարելի վարչական, իրավաբանական և տնտեսական խնդիրների առաջացմանը:

Այս տեսանկյունից խիստ բնորոշ է, որ 2001 թվականի սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո գլոբալիզացիոն գործընթացները հարստացել են նոր նրբերանգներով: Այսօր ավելի քան նկատելի են դարձել ԱՄՆ – ի կողմից, համաձայն վերլուծաբանների որակման «կայսերապաշտական» ձգտումները, որոնք ուղեկցվում են նախկին դաշնակիցներից ինքնամեկուսացման միտումներով: Նման դիրքորոշումը ԱՄՆ-ը հիմնավորում է իր ռազմական և տեխնոլոգիական գերազանցությամբ և հայտարարում է, ելնելով սենատոր Ռ.Լուգարի դոկտրինից, որ իրենք ինքնաբավ են և իրենց քաղաքական գիծը վարելիս կարիք չունեն եվրոպական երկրների, այդ թվում նաև ՆԱՏՕ-ի աջակցությամբ: Այսպիսով, կարող ենք փաստել, որ գլոբալ գործընթացներ հարուցող երկրների մեջ իսկ տեղի է ունենում շերտավորում և առանձնացում՝ համաձայն գլոբալիզացիոն չափանիշների:

Հատկանշական է նաև, որ այս տիպի մոտեցումն արդեն իսկ ընդունել է ռեալ տեսք՝ ԱՄՆ-ը միակողմանի փոփոխություններ է կատարում իր ռազմական համակարգում և մասնավորապես՝ եվրոպական ռազմական թատերաբեմում, բոյկոտում է Միջազգային քրեական դատարանի ստեղծումը, որը նախկինում համարվում էր «գլոբալ աշխարհի խորհրդանիշ», պահանջելով իր համար անձեռնմխելիության երաշխիքներ: Բնական է, որ այս ամենը ստիպում է եվրոպական տերություններին մշակել պաշտպանական հակաքայլեր:

Այսպիսով այն ամենը, ինչ վերաբերվում է գլոբալիզացիոն գործընթացին ռազմաքաղաքական, տնտեսական և այլ ոլորտներում, ավելի շուտ կրում է տնտեսապես և տեխնոլոգիապես զարգացած տերությունների կողմից իրենց առավելությունների պահպանման բնույթ, ինչը հաճախ ընդունում է ավելի ինքնամեկուսացման, քան համաշխարհային տարածքի ունիֆիկացիայի տեսք: Օրինակ, ԱՄՆ-ը մեկուսանում է եվրոպայից, վերջինս՝ մնացյալ աշխարհից: Իսկ այսպես կոչված սահմանների բացումը կրում է միակողմանի բնույթ՝ վերջին ժամանակահատվածում զարգացած երկրների սահմանները ավելի և ավելի են փակվում մյուսների համար:

Այսպիսով, *տեղեկատվական համակարգի հիմնախնդիրների* առումով գլոբալիզացիան ներկայացնում է մի գործընթաց, որը բարենպաստ նախադրյալներ է ստեղծում զարգացած երկրներին իրենց առաջատար դիրքերը պահպանելու համար: Նկատենք նաև, որ այս իրողության նկարագրությունը դուրս չի գալիս համաշխարհային մրցակցության մեջ ընդունված պրակտիկայի սահմաններից:

Միևնույն ժամանակ, համաշխարհային մրցակցությունը ներկայումս ընդունել է այնպիսի բնույթ, որ այդ մրցակցության խաղի կանոնները ապահովում են ուժեղ կողմի համար առավել բարենպաստ պայմաններ: Այդ իսկ լրացուցիչ պատճառով զգալիորեն ավելի է խորանում զարգացման մակարդակների տարբերությունը տարբեր երկրների միջև:

Այսինքն՝ գլոբալիզացիան իրականում հանգեցնում է ոչ այնքան համաշխարհային տարածքի համահավասարեցման և ունիֆիկացիայի, որքան տնտեսապես չզարգացած պետությունների «քաղաքակրթական, տնտեսական գավառականացմանը, նրանց՝ «գետտոիզացիային»: Սա իր հերթին սրում է հակասությունները, հրահրում է ահաբեկչական գործողություններ՝ իր բոլոր հետևանքներով:

Գլոբալիզացիայի գործընթացը համաշխարհային *տեղեկատվական միատարր դաշտի*, այսինքն դյուրին կառավարվող տարածքի ձևավորման գործում նույնպես հանգեցնում է հակասական արդյունքների:

Կարող է թվալ, որ իրոք այսօր աշխարհը տեղեկատվական տեսակետից ավելի միատարր է դարձել: Սակայն դա վերաբերում է տեղեկատվության մի փոքր, դյուրամարս հատվածին, որը մատչելի է բոլորի համար: Տեղեկատվության առավել արժեքավոր հատվածը, այն, ինչ Դ.Բեյլը անվանում էր «գիտելիքներ և առաջատար տեխնոլոգիաներ», ավելի և ավելի է կենտրոնանում մի քանի զարգացած երկրներում:

Իր հերթին վերոհիշյալ դյուրամարս տեղեկատվությունը, հենց դյուրամարսության շնորհիվ, սկսում է «լվանալ», դուրս մղել ազգային արժեքները այն երկրներում, ուր էլ սկսել է ներթափանցել: Սա նույնպես հանգեցնում է յուրահատուկ, դժբաղ «գետտոիզացիայի»:

Այս հանգամանքներն ավելի խոր քննարկելու համար անհրաժեշտ է համառոտ ծանոթանալ այն մեթոդներին և ռազմավարությանը, որոնք կիրառվում են տեղեկատվական ոլորտում արդի ժամանակաշրջանում: Հենց այս հարցերի քննարկմանն է նվիրված հաջորդ բաժինը:

Ինֆոզենն մարտահրավերներ

Հատկանշական է, որ տեղեկատվական հեղափոխությունը, որը, համաձայն Դանիել Բելլի և Նրա համախոհների, պետք է հանգեցնի մարդկության բարօրությանը, իր հերթին ծնեց նաև բազում նոր, նախկինում անալոզները չունեցող գործընթացներ և խնդիրներ: Այդ գործընթացների և խնդիրների համախումբը մենք կկոչենք տեղեկատվածին կամ ինֆոզենն¹: Ինֆոզենն գործընթացները պարունակում են և՛ դրական, և՛ բացասական վտանգ պարունակող բաղադրիչներ: Այդ վտանգները կարելի է դասակարգել երկու հիմնական տիպի:

1. Վտանգներ, որոնք կապված են անհատի, հասարակության, ազգի կամ պետության՝ այդ թվում նաև ռազմական ոլորտի, գործունեությունը կազմակերպող, պայմանավորող և համակարգող տեղեկատվական տեխնիկական համակարգերից կախվածության և այդ համակարգերի տեխնիկական խոցելիության հետ:

2. Վտանգներ, որոնք կապված են անհատի կամ հասարակության, ազգի հոգեկան և մտավոր, ինչպես նաև արժեքային համակարգերի հնարավոր փոփոխությունների և խեղաթյուրումների հետ և պայմանավորված են տեղեկատվական-լրատվական անկառավարելի կամ հակառակը՝ հատուկ նպատակաուղղվածությամբ կառավարելի հոսքերով:

Միևնույն ժամանակ հայտնի է, որ ազգի կամ պետության ամեն մի խոցելի գործոն ինքնաբերաբար հակառակորդի համար վերածվում է թիրախի: Հենց այս հանգամանքի վրա է, որ ստեղծվել է ժամանակակից տեղեկատվական պատերազմների հայեցակարգը և գաղափարախոսությունը: Ուշագրավ է, որ մարդու հոգեկանի և գիտակցության վրա հարձակման և խեղաթյուրման մեթոդաբանությունը մեծ «առաջընթաց» է ապրել ավելի զարգացած փուլի, այսպես կոչված *երկրորդ սերնդի* տեղեկատվական պատերազմների հայեցակարգը մշակելիս: Ուսումնասիրության այս բաժնում կփորձենք համառոտակի լուսաբանել ինֆոզենն հոգևոր և մտավոր, ինչպես նաև տեխնիկական բնույթի մարտահրավերները, արդիական տե-

¹ Գագիկ Թեր-Արտյունյան (Արտյունյան) - *Инфогенные вызовы*, ГА, 08.12.2001г.

ղեկատվական պատերազմներում կիրառվող մեթոդները և նպատակները, կապելով դրանք ՀՀ տեղեկատվական համակարգերի տեխնիկական իրավիճակի հետ:

3.1 Տեղեկատվական պատերազմներ

Ամերիկայի Սիսցայլ Նահանգները տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում այսօր գրավում է ամենաառաջատար դիրքերը: Այդ իսկ պատճառով այդ պետության փորձը արժանի է ուսումնասիրության: Նկատենք նաև, որ ԱՄՆ-ը սեպտեմբերի 11-ից հետո բազմապատկել է իր ուշադրությունը տեղեկատվական ոլորտի նկատմամբ: Մասնավորապես 2001 – ի հոկտեմբերին ԱՄՆ-ում ստեղծվել է մի կառույց, որը մասնագիտանալու է այսպես կոչված կիբերտարածության անվտանգությունը ապահովելու ոլորտում: Պաշտոնապես այն կոչվում է «Ենթակառուցվածքների կարևորագույն օբյեկտների պաշտպանության խորհուրդ»: Այդ կառույցի ղեկավար է նշանակվել Ռոբերտ Կլարկը, որն ունի կիբերտարածության անվտանգության գծով ԱՄՆ-ի նախագահի հատուկ խորհրդականի կարգավիճակ: Այդ նոր կառույցի խնդիրն է տելեկոմունիկացիոն, էներգետիկայի, ֆինանսական ծառայությունների, ջրամատակարարման, շտապ օգնության, տրանսպորտի, առողջապահության և այլ նման ազգային անվտանգության տեսակետից կարևոր ծառայությունների տեղեկատվական համակարգերի պաշտպանությունը:

Այս ամենը ԱՄՆ-ի կատարած ջանքերի մասն է վարած տեղեկատվական պատերազմներին նոր զարգացում հաղորդելու և իր նկատմամբ կատարվող տեղեկատվական գործողություններից ավելի արդյունավետ պաշտպանվելու ուղղությամբ:

Մենք այս հետազոտության առաջին բաժնում բերել ենք պատմական դարաշրջանում տեղեկատվական գործողությունների օրինակներ, նշելով, որ նրանք կրել են ոչ համակարգված, համեմատաբար պարզունակ բնույթ: Ներկայումս այդ հասկացությունը խիստ ընդարձակվել և նոր իմաստավորում է ստացել: Ավելին, համաձայն տեղեկատվական տեխնոլոգիաների փորձագետ Սերգեյ Գրինյակի², որի աշխատությունների վրա մենք մասամբ

² С. Гриняев. *Интеллектуальное противодействие информационному оружию*.-М.: СИНТЕФ, 1999.
С. Гриняев. В. Кудрявцев, Б. Родионов. *Информационная безопасность избирательных кампаний*.- М.: МАКБП, 1999.

կինեմադրության մեջ հետագա շարադրանքում, ներկայումս այդ հասկացության ստույգ սահմանում տալը կապված է դժվարությունների հետ: Բայց և այնպես, օգտվենք գոյություն ունեցող պատկերացումներից:

Համարվում է, որ տեղեկատվական պատերազմ դարձվածքը առաջին անգամ գործածել է է Թոմաս Ռոնը «Բոհինգ» ավիաընկերության համար պատրաստած իր հաշվետվությունում: Այդ հաշվետվությունում, որը կոչվում էր «Ձեռքի տեսակները և տեղեկատվական պատերազմը», շեշտվում է, որ՝ «Տեղեկատվական ենթակառուցվածքները դառնում են ամերիկյան տնտեսության կարևորագույն բաղադրիչը: Միևնույն ժամանակ, հենց այդ ենթակառուցվածքները վերածվում են խիստ խոցելի թիրախների ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական իրավիճակներում»³:

Թոմաս Ռոնի առաջադրած խնդիրները խիստ հետաքրքրեցին ԱՄՆ Պաշտպանության նախարարությանը, իսկ ինքը՝ տեղեկատվական պատերազմը դարձվածքը սկսեց հոլովվել ՋԼՄ-ներում սկսած 1991 թվականից, Իրաքի դեմ մղված պատերազմի ժամանակ, «Մրրիկ անապատում» ռազմական գործողությունը իրագործելիս: Իրաքյան պատերազմի ժամանակ՝ թերևս առաջին անգամ, նոր տեղեկատվական տեխնոլոգիաները օգտագործվեցին որպես ռազմական գործողություններ վարելու միջոց: Օրինակ, Իրաքի հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) համակարգում գործող համակարգիչների տպիչների՝ պրինտերների, «հիշողության» մեջ նախապես, դեռ վաճառման պահին դրված այսպես կոչված դեստրուկտիվ ծրագրերի շնորհիվ, որոնք ԱՄՆ հատուկ ծառայությունների կողմից էլեկտրոնային հրահանգով ակտիվացվեցին՝ ինիցիալիզացվեցին, շարքից հանվեց Իրաքի ողջ ՀՕՊ համակարգը: Իրաքյան, ինչպես նաև Հարավսլավական պատերազմի ընթացքում լայնորեն կիրառվեցին նաև բնակչության և զինուժի վրա ազդող տեղեկատվական և հոգեբանական միջոցները (տես՝ Գ.Գ. Почепцев, Информационные войны, «Рефл-бук» «Ваклер», 2001г., Գ.Գ. Почепцев, Психологические войны, «Рефл-бук» «Ваклер», 2000г., Гагик Тер-Арутюнянц, Голос Армении, 10.04. 2001г.)

Իսկ արդեն մեկ տարի հետո տեղեկատվական պատերազմ դարձվածքը սկսեց գործածվել պաշտոնապես և տեղ գտավ ԱՄՆ - ի պաշտպանության նախարարության հրամանագրերում:

³ С. Гриняев. Актуальные проблемы информационного противоборства М.: МАКБ, 2000

1996 թվականին Պենտագոնի փորձագետ Ռոբերտ Բանկերը ներկայացրեց մի զեկույց, որը նվիրված էր 21-րդ դարում ԱՄՆ-ի ռազմական նոր դոկտրինային (այսպես կոչված “Force 21” հայեցակարգը): Այդ հայեցակարգի հենքում դրված էին հետևյալ դրույթները: Ողջ թատերաբեմը բաժանվում է երկու մասի՝ ավանդական տարածություն և կիբերտարածություն: Բնորոշ է, որ վերջինիս տրվում է առավել կարևոր նշանակություն: Ռ. Բանկերը առաջարկեց կիբեր մանրամասն՝ խուսանավման հայեցակարգը, որը պետք է բնականորեն լրացներ ավանդական ռազմական հայեցակարգերը և որը նպատակ ուներ չեզոքացնելու կամ ճնշելու հակառակորդի զինված ուժերը⁴:

Այսպիսով, ռազմական գործողություններ վարելու ավանդական ոլորտներին, այն է՝ երկրին, ծովին, օդին և տիեզերքին, այժմ ավելանում է նաև տեղեկատվական ոլորտը՝ ինֆոսֆերան: Ինչպես նշում են ռազմական փորձագետները, նոր պատերազմներում հարձակման, ոչնչացման հիմնական օբյեկտ են դառնալու հակառակորդի «տեղեկատվական ենթակառուցվածքը և հակառակորդի հոգեկանը»:

Սակայն «տեղեկատվական պատերազմ» հասկացության և նրա բաղադրիչ «տեղեկատվական գործողության» ճշգրիտ սահմանումը տրվեց միայն 1998 թվականին, Պենտագոնի “Տեղեկատվական գործողությունների միացյալ դոկտրինա” հայեցակարգում: Այդ սահմանումները հետևյալն են.

• *տեղեկատվական գործողություն*. ձեռնարկվում է հակառակորդի տեղեկատվական համակարգերի կողմից տեղեկատվության հավաքման, մշակման, փոխանցման և պահպանման գործընթացը խաթարելու նպատակով՝ միևնույն պարագայում պահպանելով սեփական տեղեկատվությունը և տեղեկատվական համակարգերը:

• *տեղեկատվական պատերազմ*. ներգործում է (տեղեկատվական գործողությունների համախմբի միջոցով) հակառակորդի պետական համակարգի և նրա ռազմական, քաղաքական ղեկավարության վրա, որն արդեն խաղաղ ժամանակ կարող է հանգեցնել տեղեկատվական պատերազմ իրագործողի համար հակառակորդի կողմից նպաստավոր որոշումներ ընդունելուն, իսկ հակամարտության ընթացքում լիովին կարող է կաթվածահարել հակառակորդի կառավարման ենթակառուցվածքների գործունեությունը:

⁴ Information warfare web.

Համաձայն ԱՄՆ-ի «Տեղեկատվական գործողությունների միացյալ դոկտրինա» փաստաթղթի, տեղեկատվական պատերազմը բաղկացած է «գործողություններից, որոնք իրագործվում են ազգային ռազմական ռազմավարության գերազանցության (հակառակորդի հանդեպ) ապահովման համար, և որին հասնելու նպատակով կատարվում է ներգործում հակառակորդի տեղեկատվական համակարգերի վրա, միաժամանակ պահպանելով սեփական տեղեկատվական համակարգերը և ենթակառուցվածքները»:

Իր հերթին տեղեկատվական գերազանցությունը սահմանվում է որպես ունակություն՝ հավաքելու, մշակելու և տեղաբաշխելու իրադրության վերաբերյալ տեղեկատվական հոսքերը՝ խոչընդոտելով հակառակորդին կատարելու նույնը: Այն կարելի է սահմանել որպես ունակություն՝ սահմանելու և պահպանելու, գործողություններ կատարելու այնպիսի տեմպ, արագություն, որը կգերազանցի հակառակորդի ցանկացած տեմպ, և որը թույլ կտա իշխել հակառակորդի վրա այդ գործողությունը կատարելու ընթացքում, միաժամանակ մնալով անկանխատեսելի, և գործելով այնպես, որ կարողանաս առաջ ընկնել հակառակորդից նրա պատասխան քայլերի պահին:

Տեղեկատվական գերազանցությունը թույլ է տալիս ունենալ, ստանալ ռեալ պատկերացում ռազմական իրադրության մասին և տալ հակառակորդի ու սեփական զինուժի գործողությունների ճշգրիտ և ինտերակտիվ պատկերը ժամանակի իրական մասշտաբում: Տեղեկատվական առավելությունը այն գործիք-լծակն է, որը թույլ է տալիս հրամանատարությանը որոշիչ գործողությունների ընթացքում լայնորեն կիրառել տարբեր բնույթի ուժերի ապակենտրոնացում, ապահովել զորքերի պաշտպանություն և ռազմաճակատ մտցնել այնպիսի խմբավորումներ, որոնց կազմը առավելագույնս համապատասխանի դրված խնդիրներին, ինչպես նաև իրագործել զինված ուժերի ճկուն և նպատակաուղղված նյութատեխնիկական ապահովում:

1998 թվականի մայիսին ընդունվեց ԱՄՆ-ի նախագահ Քլինթոնի «Կրիտիկապես կարևոր ազգային ենթակառուցվածքների պաշտպանության կազմակերպման մասին» հրամանագիրը, որը, ըստ ամենայնի, հիմք հանդիսացավ վերը նշված հատուկ ծառայության կազմակերպման համար:

Այդ հրամանագիրը իրագործելու ուղղությամբ վերջին տարիներին

Պենտագոնը հասել է զգալի հաջողությունների: Սասնավորապես, Պենտագոնի ծրագրերի համար հիմնարար է համարվում «Խորը պաշտպանություն» հայեցակարգը, համաձայն որի տեղեկատվական համակարգերը պետք է բաղկացած լինեն «անվտանգության բազմաշերտ համակարգերից և այնպիսի պրոցեդուրաներից, որոնք օգտագործում են ակտիվ և պասիվ միջոցառումներ տեղեկատվական ռեսուրսների պաշտպանության ուղղությամբ, և որոնք կանխարգելում են ոչ իրավասու ներթափանցումը դեպի ունեցած տեղեկատվությունը: Խորը էշելոնավորված պաշտպանությունը պահպանում է «կրիտիկական ռեսուրսները» և գործընթացները՝ ձևավորելով զսպման քաղաքականությունը: Դա իր հերթին լայնացնում է ծրագրային միջոցների հնարավորությունները ցանցի տեղեկատվական անվտանգության ապահովման համար»:

Ամերիաժեշտ է նշել, որ ԱՄՆ-ը լուրջ հիմքեր ունի անհանգստանալու սեփական տեղեկատվական ցանցերի պահպանման ուղղությամբ: Դեռ մինչև 2001 թվականի սեպտեմբերի 11-ը արձանագրվել են ռուսաստանյան խակերների հարձակումների բազմաթիվ դեպքեր Պենտագոնի անվտանգության համակարգի վրա: ԱՄՆ-ն անգամ մի քանի պաշտոնական բողոքի նոտա է հղել Ռուսաստանին: Ավելին, ամերիկացիները որոշեցին կատարել սեփական հետաքննություն, որի արդյունքում նրանք հայտնաբերեցին, որ հասցեները, որոնցից կատարվել էին խակերային հարձակումները, գտնվում էին Ռուսաստանում:

Սակայն, ի պատասխան ամերիկյան բողոքների, ռուսական ծառայությունները հայտարարեցին, որ այդ հասցեներում գտնվող հեռախոսային համարները վաղուց անջատված են, և որ իշխանությունները խակերային հարձակումների վերաբերյալ տեղեկատվություն չունեն: Հատկանշական է, որ համաձայն ԱՄՆ-ի Ազգային Անվտանգության Գործակալության (ԱԱԳ) փորձագետ Ջ.Ադամսի, վերոհիշյալ հարձակումները եղել են երեկիցե ԱՄՆ-ի վրա կատարված ամենալուրջ կիբեր հարձակումները, իսկ կատարված հարձակման հետաքննությունը եղել է ամենախոշորը կիբեր հանցագործությունների ոլորտում: Սակայն այն չի տվել որևիցե եական արդյունք, իսկ խակերները կարողացել են իրենց համար հնարավորություններ ստեղծել՝ նորից ներթափանցելու Պենտագոնի անվտանգության համակարգը, և կողպատելու այնտեղ եղած տեղեկատվությունը: Ավելին, հնարավոր չի եղել անգամ պարզել, թե ինչպիսի տեղեկատվու-

թյուն է հափշտակվել և որքան խորն են խակերները ներթափանցել Պեն-տագոնի անվտանգության համակարգի մեջ:

Համաձայն ԱՄՆ Ֆեդերալ Յետաքննությունների Բյուրոյի (ՖԻԲ) տվյալների, միայն 1999-2000 թ.թ. զինվորական ծառայությունները գրանցել են ավելի քան 1300 լուրջ խակերային հարձակումներ: Խակերները կարողացել են ներթափանցել անգամ այն լաբորատորիաների տեղեկատվական շտեմարանները, որոնք զբաղված են միջուկային զենքի մշակումներով: Ամերիկյան հատուկ ծառայությունների կարծիքով, այդ խակերները կարող են կապված լինել ոչ միայն Ռուսաստանի, այլ նաև Չինաստանի, Յուսիսային Կորեայի և Իրաքի կառավարությունների հետ:

3.2. Տեղեկատվական հարձակում մարդու գիտակցության վրա

Այսօր դժվար է գտնել մեկին, ով հրապարակայնորեն բացառի տեղեկատվության կարևորությունն իր բոլոր ձևերով ու դրսևորումներով: Երբ նախագծվում են քաղաքական կամ այլ բնույթի կառույցներ, ապա նրանց կառուցվածքների վերնամասում միշտ առկա է լինում ՏԿԿ (տեղեկատվական- վերլուծական կենտրոն) գրությամբ սյունակը: Սակայն, ցավոք, նմանօրինակ նախագծերը հազվադեպ են իրագործվում: Ավելին, տեղեկատվության թվայն առատության պարագայում մենք հաճախ ենք հանդիպում պաշտոնատար անձանց, որոնք չունեն տեղեկատվություն ոչ անմիջականորեն իրենց վերաբերվող, ոչ էլ ընդհանուր բնույթի խնդիրների վերաբերյալ:

Նկատենք, որ անգամ այն հիմնարկներում, որտեղ կատարվել է համակարգիչների միացում ինտերնետային ցանցին, նույնպես ոչ միշտ են հանգում դրական արդյունքների: Երևանյան «պրովայդերային» ընկերություններից հայտնի է, որ որոշ պետական հիմնարկների ինտերնետից վերցրած տեղեկությունների կեսից ավելին մեղմ ասած՝ անվայելուչ բնույթ են կրում:

Նկատենք, որ նախկին կոմունիստական վարչակարգի ժամանակ իշխանությունները քիչ թե շատ հոգում էին իրենց նոմենկլատուրայի իրազեկության մասին: Սկսած որոշակի աստիճանակարգից՝ կուսակցական և պետական ապարատի աշխատակիցները ստանում էին ՏԱՄՄ-ի կազմած «Ատլաս» և «Պլանետա» պարբերականները, իսկ շատ «արգելված» գրքեր հրատարակվում էին «ծառայողական օգտագործման» համար: Դե

զգալիորեն ընդարձակում էր պետծառայողի աշխարհայացքն ու մտահորիզոնը: Այսինքն, «սովետները» ըմբռնում էին լրատվական գործոնի կարևորությունը: Սակայն, դրա հետ մեկտեղ, չունեին հավաքված տեղեկատվության տարածման և արդյունավետ օգտագործման մտածված մեխանիզմ: Այժմ միայն կարող ենք արձանագրել, որ այդ իրողությունը զգալի դեր խաղաց ԽՍՀՄ-ի փլուզման գործում:

Այսօր տեղեկատվական պատրաստվածությունն ու անվտանգությունը ձեռք են բերում հատուկ նշանակություն: Իրավացիորեն համարվում է (տես նախորդ բաժինը), որ աշխարհում տեղի է ունենում «թվային հեղափոխություն», և հետարդյունաբերական հասարակությունը վերածվում է տեղեկատվականի: Եվ այդ ամենը կատարվում է առավել քան արագ: Ըստ տեղեկատվական տեխնոլոգիաների գծով փորձագետների տվյալների, նախկինում, որպեսզի ներգրավեին 50 մլն. մարդու, ռադիոյին անհրաժեշտ էր 38 տարի, իսկ հեռուստատեսությամբ՝ 13: Ընդամենը 4 տարվա ընթացքում նույնքան մարդիկ սկսեց օգտվել ինտերնետից: 1993թ. այդ «գլոբալ սարդոստայն» ընդամենը 50 սայթ ուներ, իսկ այսօր՝ 50 մլն-ից ավելի: 1998թ. ինտերնետային ցանցին է միացել 143 մլն մարդ, իսկ 2001թ. այդ ծառայությունից օգտվողների թիվն արդեն հասել էր 700 մլն.-ի:

Ինտերնետի կիրառման տիրույթն օրըստօրե ընդլայնվում է: Այն կոմունիկացիայի առավել արդյունավետ միջոցներից է: Մասնավորապես, շնորհիվ նրա, հնարավոր եղավ օպերատիվ օգտվել նախկինում քիչ հասանելի լրատվական աղբյուրներից, ամսագրերից, գրադարաններից: Էլեկտրոնային փոստը եւ հեռախոսային ինտերնետ կապը հեշտությամբ են լուծում բազմաթիվ կոմունիկացիոն հարցեր, ինչը նաեւ խիստ հրատապ է Հայաստան-Սփյուռք կապի ենթատեքստում: Այս իմաստով, դժվար է գերազանահատել Ինտերնետի դրական դերը:

Սակայն, ինչպես ցանկացած խոշոր գիտա-տեխնիկական նվաճում, ինտերնետը նույնպես ծնում է բազմաթիվ խնդիրներ: Նրանում պարփակված տեղեկատվական էներգիան համեմատելի է միջուկայինի հետ և այն, ինչպես միջուկային էներգիան, կարող է ունենալ երկակի օգտագործում: Խնդիրը միայն այն չէ, որ կասկածելի որակի «ինտերնետային մշակույթը» օգտվողների անպատրաստ, հիմնականում դեռ պատանիների մոտ ձևավորում է առանձնահատուկ մտածելակերպ ու հոգեվիճակ: Այդ «գլոբալ սարդոստայնը» ինֆորմացիոն պատերազմի գործիքներից է և, այդ

իսկ պատճառով կարող է հանդիսանալ հնարավոր աղետների ու վտանգների աղբյուր: Այս տիպի մարտահրավերները, ինչպես նշել ենք ներածությունում, կարելի է սահմանել որպես «ինֆոզեն»: Չնայած իր ոչ նյութական ծագմանը, «ինֆոզեն» զենքը զանգվածային ոչնչացման միջոց է, նրա ազդեցության պատճառով միլիոնավոր մարդիկ վերածվում են հոգեպես ոչ լիարժեք, հեշտությամբ մանիպուլացվող էակների (տես С.Кара-Мурза, Манипуляция сознанием, Москва, «Алгоритм», 2000, Гагик Тер-Арутюнянц, Манипуляция сознанием, ГА, 10.09.2000г.):

Ներկայումս «Ռենդ» կորպորացիայի մասնագետների կողմից մշակվում է նոր՝ երկրորդ սերնդի, տեղեկատվական պատերազմների հայեցակարգը: Եվ եթե առաջին սերնդի ինֆորմացիոն պատերազմը դիտվում էր որպես կարևոր բաղադրիչ ընդհանուր պատերազմի ավանդական միջոցների՝ միջուկայինի, կենսաբանականի և այլնի կողքին, ապա երկրորդ սերնդինը հանդես է գալիս լիովին ինքնուրույն:

Նոր սերնդի ինֆորմացիոն պատերազմի գաղափարական հայրերն այն համարում են ռազմավարական հակամարտության սկզբունքորեն նոր տիպ, որը «կյանքի է կոչված տեղեկատվական հեղափոխությանը: Տեղեկատվական տարածության մեջ է մտցնում հակամարտության հավանական ուղորտները (առաջին հերթին տնտեսությունը և մարդու, հասարակության հոգևորը և գիտակցությունը): Եվ այն ժամանակային տիրույթում կարող է տևել ամիսներ, տարիներ...»: Ի թիվս խնդիրների, որոնք լուծվում են երկրորդ սերնդի տեղեկատվական զենքի միջոցով, առանձնացնենք հետևյալները.

1. բարոյագուրկ, ոչ հոգևոր մթնոլորտի և հակառակորդի մշակութային ժառանգության նկատմամբ բացասական վերաբերմունքի ստեղծում:

2. քաղաքական լարվածության ու քաոսի ստեղծման նպատակով երկրի բնակչության սոցիալական խմբերի քաղաքական կողմնորոշման և հասարակական գիտակցության մանիպուլյացիա:

3. առճակատումների հրահրման, անվստահության, կասկածամտության սերմանման, քաղաքական պայքարի սրման նպատակով կուսակցությունների միջև քաղաքական հարաբերությունների ապակայունացում, ընդդիմության դեմ բռնությունների սադրում, փոխոչնչացման դրդում:

4. իշխանության և կառավարման մարմինների լրատվական ապահով-

վածության մակարդակի իջեցում, կառավարման սխալ որոշումների ներշնչում,

5. պետական մարմինների աշխատանքի մասին ապատեղեկատվություն, նրանց հեղինակազրկում, կառավարման մարմինների վարկաբեկում:

6. սոցիալական, քաղաքական, ազգային և կրոնական բախումների հրահրում:

7. կառավարման մարմինների կողմից կայացվող որոշումների դժվարացում:

8. պետության միջազգային հեղինակության գցում, այլ երկրների հետ նրա համագործակցության վնասում

9. քաղաքական, տնտեսական, պաշտպանական և այլ ոլորտներում պետության կենսականորեն կարևոր շահերի վնասում:

Նշենք, որ երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմները վտանգավոր են հատկապես այն երկրների համար, որոնք պատրաստ չեն դիմակայելու նմանատիպ ագրեսիայի: Աֆղանստանում թալիբների դեմ «հակաահաբեկչական կռաւիցիայի» կողմից վարվող պատերազմը ուժային և տեղեկատվական բնույթի գործողությունների զուգակցման ակնառու օրինակ է: Ավելին, կան բոլոր հիմքերը կարծելու, որ «ահաբեկչության դեմ պատերազմում» գերիշխում էր տեղեկատվական բաղադրիչը: Մեր կարծիքով, հենց այդ գործոնը աֆղանական արշավանքին տվեց այդչափ արդյունավետություն: Նույնը մենք դիտում ենք նաև այսօր, ԱՄՆ-ի կողմից Իրաքի հանդեպ վարվող աննախադեպ տեղեկատվական-հոգեբանական պատերազմում: Բայց վերադառնանք սեփական խնդիրներին:

3.3 Նորքաղաքականություն և տեղեկատվական անվտանգություն

Տեղեկատվական պատերազմի խնդիրների նախորդ ենթաբաժնում նշված ցանկի հետ ծանոթությունը հանգեցնում է այն մտքին, թե մեր հանրապետությունն արդեն ենթարկվել է կործանիչ տեղեկատվական «ասպատակության», այն էլ բարձրագույն՝ երկրորդ սերնդի մակարդակով: «Իշխանական և կառավարման մարմինների (նաև ժողովրդի - Գ.Յ.)

լրատվական ապահովվածության մակարդակի իջեցման, կառավարման սխալ որոշումների ներշնչման» օրինակ կարելի է համարել Պետական գույքի կառավարման նախարարության հայտնի գրողը ՋԼՄ-ների հրատարակչությունների դեմ: Վերջիններիս տնտեսապես ճնշելը խարխուլում է հանրապետության լրատվական դաշտի առանց այդ էլ փխրուն ենթակառուցվածքը: Այդպիսի գործողությունները դժվար է կոչել ուրիշ կերպ, քան հակապետական:

Ուրիշ բան է, որ որոշ թերթեր կատարում են «լրատվական մահակի» դեր, «հասարակական գիտակցության մանիպուլացման» միջոցով «ստեղծում են ոչ հոգևոր մթնոլորտ» և «ապակայունացնում կուսակցությունների միջև քաղաքական հարաբերությունները»: Այս առիթով նկատենք, որ հայրենական ՋԼՄ-ների հրապարակումների ու ռադիո-հեռուստատեսային հաղորդումների ուսումնասիրությունը հանգեցնում է հետաքրքիր եզրակացությունների: Օրինակ, առանձին նյութերում տարօրինակ կերպով համադրվում են արդեն սովորական դարձած պարզունակությունն ու ակնհայտորեն դրսից ներմուծված ժամանակակից ինֆոտեխնոլոգիաների տարրերը:

Այս առիթով հարկ է ընդգծել, որ տեղեկատվական ներգործությունը, որը, ինչպես արդեն նշվել է վերը, իրագործվում է տեղեկատվական գործողությունների և տեղեկատվական պատերազմների միջոցով, տեխնոլոգիական միջոց է, գործիք, այն կիրառող սուբյեկտի համար իր ռազմավարական պլանները իրագործելու համար: Տեղեկատվական գործողություններով ռազմա-քաղաքական ռազմավարության իրագործումը ստացել է *նոոքաղաքականություն* անվանումը և այժմ լայնորեն օգտագործվում է միջազգային պրակտիկայում՝ աստիճանաբար դուրս մղելով քաղաքականության ավանդական վարման որոշ տարրեր:

Այսպիսով, այս կամ այն երկրում դրսից թելադրվող տեղեկատվական գործողությունների ի հայտ բերելու անհրաժեշտ պայմանը այդ երկրի և այլ տերությունների քաղաքական հարաբերակցությունների, շահերի հանդնկման կամ հակասությունների իմացությունն է:

Միևնույն պարագայում, փաստացիորեն ի հայտ բերելով այս կամ այն տերության *նոոքաղաքականության* արտահայտումները, բովանդակությունը և ուղղությունը սեփական հասարակությունում կամ պետությունում, կարելի է բավական մեծ ճշգրտությամբ որոշել այդ տերության ռազ-

մաքաղաքական մտադրությունները սեփական պետության նկատմամբ:

Բերենք մի քանի օրինակներ, որոնք, համոզիսանում են այլ տերությունների նոոքաղաքականության արտահայտությունն են ՀՀ- ի նկատմամբ:

- Արևմտյան, մասնավորապես ամերիկյան «հայագիտության դպրոցի» գործողությունները, որոնք, համակարգված աղավաղելով պատմական փաստերը, փորձում են հայ ազգի, հայոց պատմության, հայկական ազգային գաղափարախոսության և մասնավորապես Եղեռնի ձևավորել թյուր, բարդույթված, բարոյագրկող և պարտվողական պատկերացումներ (ավելի մանրամասն տես Արմեն Այվազյան՝ «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ» և այդ հեղինակի այլ գործերը, ինչպես նաև Гагик Тер-Арутюнянц «Агентура специального назначения» ГА, 14. 05.2002).

- Միջազգային որոշ հասարակական կազմակերպությունների կողմից հայկական լրատվամիջոցների նկատմամբ որոշակի գործողությունները կապված մասնավորապես նրանց ֆինանսավորման հետ, կարող են հնարավոր պատճառը լինել ՀՀ մի շարք լրատվամիջոցների ապազգային կողմնորոշումների և արտահայտությունների (սրանց օրինակները շատ են. բավական է բացել մեզ բոլորիս հայտնի մի քանի թերթ, մասնավորապես «Новое время» -ն կամ «Հայկական ժամանակ» - ը):

- «Հոկտեմբերի 27»-ի ահաբեկչությունը, անկախ կուսակցական կամ անհատական դիրքորոշումներից և մոտեցումներից, խոշոր հարված էր՝ ուղղված հայկական պետականության դեմ: Սակայն այդ իրողության շարունակական լուսաբանումը և քննարկումը որոշ տպագիր լրատվամիջոցներում ընթանում էր ֆրանսիական հեղափոխության ժամանակների ուստիականության ղեկավար Ֆուշեյի հայեցակարգի համաձայն՝ մարդուն սպանելը բավական չէ, անհրաժեշտ է սպանել նրա հեղինակությունը (ռեպուտացիան): Հաշվի առնելով այս դրույթի անհամատեղությունը հայկական մենթալիտետի հետ, ինչպես նաև նման հրապարակումների խիստ համակարգված և համաձայնեցված գործողությունները (ինչը նույնպես բնորոշ չէ տեղական լրատվամիջոցներին), կարելի է ենթադրություններ կատարել նման հրապարակումների պատվիրված լինելու վերաբերյալ:

ՀՀ հեռուստատեսային հաղորդումներում բավական ցցուն են դարձել այսպես կոչված «սպիտակ աղմուկ» տեխնոլոգիայով իրագործվող հաղորդումները, երբ լրատվական հոսքը կառուցվում է առանձնապես ոչինչ

չասող տեղեկատվությունների համախմբով: Այդ կարգի, դեռևս հստակ պատասխան չստացած գործողությունների թվարկումը կարելի է անընդհատ շարունակել:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել նաև, որ հաճախ մենք ականատես ենք լինում սեփական, տեղական նախաձեռնությամբ ծավալված տեղեկատվական գործողությունների, որոնք ակնհայտորեն վտանգում են մեր ազգային անվտանգությունը: Նման կարգի տեղեկատվական գործողությունները գրականության մեջ ստացել են «տեղեկատվական պատերազմ սեփական ժողովրդի դեմ» որակումը և, ի դեպ, խիստ բնորոշ են ռուսական լրատվամիջոցներին:

Անհրաժեշտ է նշել նաև, որ ներկայումս որոշ միջազգային կազմակերպություններ, ունենալով աշխարհով սփռված, այսպես կոչված ցանցային կառույցներ, նույնպես վարում են իրենց սեփական *ճորձադաշտայինությունը*: Դա արտահայտվում է աղանդների, սեքսուալ այլասերությունների, մեր ազգային նկարագրին անհամատեղելի և ակնհայտորեն բարոյազրկող գաղափարների և համապատասխան գրականության (ի դեպ հիմնականում անվճար) տարածումով: Դրան զուգահեռ կատարվում է զանգվածային լրատվամիջոցներում երկիմաստ, թաքնված, այսպես կոչված «կրիպտոգովազդային» բովանդակության նյութերի հրատարակումը և «հատուկ» գրականության վաճառքը:

Սակայն, ՀՀ տեղեկատվական դաշտում գործող լրատվական աղբյուրների վերլուծությունը խիստ ծավալուն թեմա է: Այն կարիք ունի շարունակական վերլուծության ու տեղեկատվական փստորոշման և այդ փստորոշումից ելնելով՝ պետության կողմից համապատասխան հակազդեցության կամ խրախուսման:

Իսկ այժմ համառոտ դիտարկենք ՀՀ-ում տեղեկատվական տեխնիկական համակարգի իրավիճակը:

ԳԼՈՒԽ 4

Տեղեկատվական տեխնիկական (էլեկտրոնային) միջոցների անվտանգությունը

Ինչպես նշվեց այս ուսումնասիրության նախորդ բաժիններում, տեղեկատվական անվտանգության ենթակառուցվածքների թույլ զարգացվածությունը կամ, որոշ պարագաներում, ընդհանրապես բացակայությունը, թույլ են տալիս կատարել տեղեկատվական գործողություններ, որոնք, ըստ մեզ, նպատակ ունեն խարխլել անհատի, հասարակության, կամ ընդհանրացնելով այս հասկացությունները՝ ազգի, աշխարհընկալման մեխանիզմների աղեկվատությունը: Որպես հետևանք նման տիպի գործողությունների, նվազում են ազգի դիմադրողականությունը, մրցունակությունը, այսինքն նվազում են նրա գոյատևման կամ հարատևման հնարավորությունները:

Այս հիմնախնդրին զուգահեռ, տեղեկատվական անվտանգության մյուս կարևոր բաղադրիչն է տեղեկատվության տեխնիկական կամ էլեկտրոնային՝ ռադիո, հեռուստատեսային, հեռախոսային, ինտերնետային, համակարգչային, միջոցների ապահովման հարցը: Հաշվի առնելով այս հարցի լայն ծավալը, ուսումնասիրության այս բաժնում կփորձենք լուսաբանել ՀՀ գործող ինտերնետային կապի և համակարգչային միջոցների անվտանգության հարցերը, մասնավորապես ելնելով «Արմենտելի» մեմատիրության հանգամանքից հեռահաղորդակցական ծառայությունների ոլորտում:

4.1 Հեռահաղորդակցական ծառայությունների մեմատիրությունը և տեղեկատվական անվտանգությունը ՀՀ – ում

Հայաստանում գործում է հեռահաղորդակցական ծառայությունների միակ պրովայդեր՝ «Արմենտել»-ը: Այդ բաժնետիրական ընկերությունը հիմնադրվել է 1995թ.: Սկզբնապես նրա արժեթղթերի 51%-ը պատկանում

եր 33 կապի նախարարությանը, իսկ 49%-ը TWT (ԱՄՆ) կորպորացիային: 1998թ. հունական OTE հեռահաղորդակցական ընկերությունը ձեռք բերեց «Արմենտելի» արժեթղթերի 90%-ը, իսկ մնացած 10%-ը մնաց 33 կառավարությանը:

«Արմենտելը» ունի հեռահաղորդակցական ծառայությունների մի ամբողջ շարքի մատուցման բացառիկ իրավունք: Նա մենատեր է հեռահաղորդակցական ծառայությունների ազգային շուկայում:

Այդպիսի մենատիրության, որը հաստատվեց 33 կառավարության կողմից, գոյության փաստն իսկ տարօրինակ է թվում: Հատկապես, որ նման «բացառիկ» կարգավիճակն ավելի ու ավելի հաճախ է օգտագործվում պոտենցիալ մրցակիցների (իրական մրցակիցներ պարզապես չկան) դեմ պայքարելու համար: Իսկ պայքարի մեթոդները դառնում են ավելի կոպիտ, ավելի լկտի:

Քիչ չեն եղել «Արմենտելի» դեմ ուղղված դատական հայցերը, այդ թվում մի շարք միջազգային արբիտրաժային մարմիններում: Սակայն ձգձգվող դատական գործընթացները և Հայաստանի բարձրագույն իշխանական շրջանակներում ընկերության շահերի ակնհայտ լոբբինգը ի չիք են դարձնում մենատիրոջը «տեղը դնելու» բոլոր փորձերը:

Հետաքրքիր է, որ Հայաստանի տարածքում տնտեսական նորմալ հարաբերությունների զարգացմանը նպաստած (համաձայն իրենց իսկ հրապարակած ծրագրերի) միջազգային կազմակերպություններն առանձնապես չեն էլ հետաքրքրվում ակնհայտ մենատիրոջով: Այդպիսի լռությունը տարօրինակ է, թեկուզ և այն պատճառով, որ գործնականում բոլոր մնացած, այսպես կոչված «շուկայական» հարցերում Համաշխարհային բանկի, ԱՄՆ Ջարգացման գործակալության և նմանատիպ այլ կազմակերպությունների ներկայացուցիչները ցուցաբերում են նախանձելի ջանասիրություն՝ ընդհուպ մինչև սեփական որոշումների պարտադրում:

Այսպիսով, «Արմենտելը» Հայաստանի տարածքում հեռախոսային ծառայությունների (ներառյալ բջջային կապը) միակ պրովայդերն է: Բացի այդ «Արմենտելը» ինտերնետ-ծառայությունների գերմատակարարիչն է (super-provider): Այսինքն՝ բոլոր գործող ինտերնետ-պրովայդերները պարտավոր են ինտերնետ-պակետ՝ IP-կապի, կապուղիներ գնել միայն «Արմենտելից» և այն վերավաճառել սպառողներին: «Արմենտելին» են պատկանում նաև նախկին հանրապետական հեռախոսային ցանցի (ATC,

կապի կաբելներ և այլն) հաղորդակցական ուղիների գործնականում բոլոր միջոցները:

Արդյունքում, ի՞նչ ունենք մենք՝ Հայաստանի տարածքում ապրող անձինքս և Հայաստանի Հանրապետությունը:

Առաջին՝ հեռահաղորդակցական ծառայությունների ոչ ադեկվատ բարձր զմեր՝ եկրում գերցածր կենսամակարդակի պայմաններում:

Երկրորդ՝ առաջընթացի բացակայություն և մի շարք ընկերությունների, որոնք փորձում էին հաստատվել շուկայում (նրանցից շատերը իրոք առաջարկելու բան ունեին), ճգնում՝ դեռ «սաղմնային» վիճակում: Այսպես, օրինակ, մի քանի փոքր ընկերություններ, հենց նույն «Արմենտելից» ձեռք բերելով IP- կապուղիներ, սկսեցին առաջարկել միջազգային հեռախոսային և ֆաքսիմիլային կապի ծառայություններ: IP-հեռահաղորդակցական գծերի օգտագործումը թույլ էր տալիս նրանց մատուցել ծառայություններ, որոնք 5-10 անգամ էժան էին «Արմենթելի» առաջարկածներից: Հայաստանի համար, որի բնակչության մի մեծ խումբ ներկայումս ապրում է իր երկրի սահմաններից դուրս, այդ կարգի ոչ թանկարժեք կապն ուղղակի երկար սպասված հրաշք էր:

Ի դեպ, 33 կապի նախարարությունը առատորեն տրամադրում էր արտոնագրեր՝ նմանատիպ ծառայությունների առաջարկման վերաբերյալ: Սակայն մի գեղեցիկ օր «Արմենտելը» ուղղակի անջատեց IP-հեռախոսային բոլոր ընկերությունների մուտքային հեռախոսները՝ հենվելով մեկ իր «բացառիկ» իրավունքների, մեկ՝ «հեռախոսների և կապի կապուղիների ոչ ըստ նշանակության օգտագործման» մշուշոտ ձևակերպման վրա: Կարճատև դատական քաջքշուկներից հետո, առանձին ընկերություններ (ճիշտ է, որոշակի սահմանափակումներով) վերսկսեցին իրենց գործունեությունը: Սակայն, ընդհանուր առմամբ, IP-հեռահաղորդակցական ուղիների շուկայի զարգացումը կանգնեցվեց:

Եվ վերջապես, *Հայաստանը անդրկովկասյան տարածաշրջանում ունի կարևորագույն դերակատարություն: Եվ այս երկրում հեռահաղորդակցական գործնականում բոլոր միջոցները կենտրոնացված են ու գտնվում են այնպիսի ընկերության միանձնյա տրամադրության ներքո, որը ներկայացնում է ՆԱՏՕ-ի անդամ և տարածաշրջանում սեփական շահերն ունեցող մեկ այլ երկիր:*

Գոյություն ունի՞ երկրներում:

Մի քանի պրովայդեր ընկերություններ փորձ արեցին ստեղծել հանրապետական մասշտաբի հեռահաղորդակցական սեփական համակարգեր: Ըստ այդ նախագծերի, ծրագրվում էր մայրաքաղաքում ստեղծել ցանցի կենտրոնական հատվածամաս (segment) և միացնել (այդ նույն «Արմենտելից» վարձակալված կամ գնված օպտիկամանրաթելային մալուխների կամ ռադիո-մոդեմային տեսակի կապերի օգտագործմամբ) նրան (կենտրոնական հատվածամասին) 33 մարզերը:

Փնտրվում էին նաև հնարավորություններ արբանյակային կապուղիների միջոցով, որոնք չէին պատկանում «Արմենտելին», դուրս գալու «մեծ» ինտերնետ: Սակայն այդպիսի նախագծերի իրականացմանն ուղղված առաջին իսկ քայլերից հետո, «Արմենտելը» ցույց էր տալիս իր ակնհայտ անշահագրգռվածությունը նմանատիպ ծրագրերի նկատմամբ և հաճախ կասեցնում էր այն (ծրագրերը)՝ թափահարելով իր «բացառիկ» իրավունքները: Ի վերջո, նման նախագծերը բերեցին ցանցերի առանձին, տարաբնույթ հատվածների գոյությանը, որոնք իրենից չներկայացնելով մեկ ամբողջություն՝ պատկանում են զանազան սեփականատերերի:

Ներկայումս Հայաստանում առանձին ընկերությունների կողմից օգտագործվում է *սաինիտրոն*, այսինքն՝ *ոչ միաժամանակյա*, արբանյակային հաղորդակցությունների հայեցակարգը՝ ժամանակին հայտնի DirecPC տեխնոլոգիայի նման, որը թույլ է տալիս շրջանցել «Արմենտելի» սահմանափակ տեխնիկական հնարավորությունները՝ չխախտելով նրա իսկ մենատիրությունը (տես՝ նկ.1):

Ինտերնետի հետ ոչ միաժամանակյա աշխատանքի սկզբունքը հետևյալն է.

1. Ինտերնետի միջին վիճակագրական օգտագործողը ինտերնետի հետ աշխատանքի ժամանակ միջինում ստանում է ավելի շատ տեղեկատվություն, քան ուղարկվում է: Ստացված և ուղարկված տեղեկատվության հարաբերակցությունը կարող է կազմել 9:1 :

2. Նույն աղբյուրից տվյալները կարող են ընդունիչին հասնել տարբեր ճանապարհներով (ուղիներով):

Արդյունքում ինտերնետ-ծառայություն մատուցող ընկերությունը կարող է ամել հետևյալը.

1. Դեպի ինտերնետ դուրս գալու համար՝ այդ նույն «Արմենտելից» գնում է IP- կապուղի:

2. Տեղադրում է արբանյակային ընդունող անտենա («արբանյակային ափսե»): Քանի որ այդ անտենան բացառապես ընդունիչ է և քիչ է տարբերվում արբանյակային հեռուստաալիքներ ընդունող անտենայից, ապա նրա տեղադրման համար արտոնագիր անհրաժեշտ չէ:

3. Ասինիտրոն կապի ծառայություններ մատուցող ընկերության հետ կնքում է համապատասխան պայմանագիր:


Ի վերջո, ինտերնետի տեղական օգտագործողը իր web-բրոուզերում հավաքում է ինչ-որ web-էջի հասցեն: Այնուհետև, արմենտելյան կապուղու միջոցով web-սերվերին ուղարկվում է հարցում (տեղեկատվության մեկերկու տող): Իսկ հանձնարարված հասցեում գտնվող տեղեկատվությունը, դեպի տեղական օգտագործողը ուղղված ճանապարհին, հատուկ սարքավորումների միջոցով հեռարձակվում է ինտերնետային ֆորմատի մեջ, որն էլ, իր հերթին, օգտագործվում է արբանյակի միջոցով տվյալների փոխանցման համար: Այնուհետև այդ տեղեկատվությունը ընդունվում է տեղական ընդունիչ արբանյակային անտենայի կողմից, հետադարձ հեռարձակվում ինտերնետային ֆորմատի մեջ (TCP/IP արձանագրություն) և ուղղվում դեպի օգտագործողի (որը հավաքել էր web-էջի հասցեն) համակարգիչը:

Նկատի ունենալով ընդունող ալիքի աշխատանքի մեծ արագությունը (մինչև 400 կիլոբիթ/վայրկյան)՝ ինտերնետի շարքային օգտագործողների աշխատանքը ձեռք է բերում վիթխարի արդյունավետություն և արագություն: Տվյալների փաթեթները, արբանյակային հաղորդակցությունների միջոցով ուղարկելուց առաջ, կոդավորվում են ըստ DES ստանդարտային ալգորիթմի, որը սակայն չի երաշխավորում տվյալների անվտանգությունը, բայց նրանց «զավթումն» ու վերլուծությունը առնվազն դարձնում է թանկարժեք և աշխատատար:


Վերը նկարագրված տեխնոլոգիաները ներկայումս զգալի առաջընթաց են ապրել: Հնարավորություն է ստեղծվել տվյալների փոխանցման համար օգտագործել փոքր հզորության արբանյակային անտենաներ: Այսինքն՝ ելքային ալիքի գնման անհրաժեշտությունը հասցվում է մինիմումի: Սակայն, եթե հաշվենք, որ հայկական ցանկացած պրովայդեր ընկերություն պարտավոր է «Արմենտելից» գնել IP կապուղի, ապա նմանա-

տիպ ալիքների պաշտոնական օգտագործման փորձերը կասեցվում են կամ անմիջականորեն «Արմենտելի», կամ նրա «համեմարարությամբ» այլ մարմինների կողմից:

Այնուամենայնիվ, առանձին ընկերություններ, հավանաբար ոչ պաշտոնական, օգտագործում են այդ կարգի («Արմենտելի» բնութագրմամբ «ծախ») արբանյակային ալիքներ, քանի որ «Արմենթելի» տեխնիկական հնարավորությունները զգալիորեն սահմանափակ են, իսկ ինտերնետ մուտք ունենալու համար նրա կողմից առաջարկված ծառայությունների գները միջազգային գներից բարձր են մի քանի անգամ:



Նկ. 1



Նկ. 2

Հայաստանում տեղակայված է ռուսական “МИР” հեռուստաընկերության ընդունիչ-հեռարձակիչ անտենան: Ըստ վերը նկարագրված մեթոդի, այդ անտենան կարելի է օգտագործել ինտերնետային նման կապի համար: Վերջին հաշվով այդ անտենան կարող է ռուսական “РосТелком” հեռահաղորդակցական ընկերությունից ապահովել IP-ալիքներ՝ 2 մեգաբիթ/վայրկյան արագությամբ (ի դեպ, այդ նույն “РосТелком”-ը ինտերնետ մուտք է ապահովում նաև «Արմենտելի» համար): Դեռ ավելին, այդպիսի փորձեր հաջողությամբ արվել են հայկական ACC ընկերության կողմից, որը հայտարարել է ARPI տվյալներ հաղորդող և ՀՀ մարզերը ԼՂՀ-ի մայրաքաղաքի հետ կապող Մեդրու շրջանում միջմայրցամաքային (Եվրոպա-Ասիա) օպտիկական մալուխին միացող ազգային գերարագ ցանցի ստեղծման մասին:

Հաշվի առնելով հաղորդակցական սեփական օպտիկամանրաթելային ուղիներ ունենալու թանկությունը՝ ենթադրվում էր վարձակալել կամ գնել այդ միջոցներն «Արմենտելից»: Իսկ մուտքը դեպի «մեծ» ինտերնետ նախատեսվում էր իրականացնել վերոհիշյալ “МИР” հեռուստաընկերության անտենայի միջոցով: Սակայն «Արմենտելի» միջամտությունից հետո “МИР” հեռուստաընկերության հետ գործարքը կանգնեցվեց: Փոխարենը, ինքը՝ «Արմենտելը» (համաձայն ACC-ի տնօրենի հայտարարության), ցույց է տալիս ակնհայտ անշահագրգռվածություն ACC-ի հետ համագործակցության հարցում՝ կապված ARPI ազգային ցանցի ստեղծման հետ: Սակայն մենք դեռ չունենք տեղեկություններ այդ նախագծի ներկայիս իրավիճակի մասին: Չկան նաև տվյալներ ինտերնետ մուտք ունենալու համար “МИР” հեռուստաընկերության անտենայի օգտագործման վերաբերյալ:

Ջրվեժի շրջանում է գտնվում ընդունիչ-հեռարձակիչ արբանյակային մեծ անտենա, որը մինչև վերջին ժամանակներս ելք ուներ դեպի կապի գործող խորհրդային գեոստացիոնար արբանյակներից մեկը (ենթադրաբար “Молния” տեսակի): Մի քանի տարի առաջ հենց այդ անտենան էր ապահովում «Արմենտելի» (իմա՝ Հայաստանի) մուտքը դեպի ինտերնետ՝ կապի այլ ծառայությունների հետ միասին: Ներկայումս ինտերնետ մուտք ունենալու համար «Արմենթելը» օգտագործում է “РосТелком”-ին միացված օպտիկամանրաթելային կապուղին (միջազգային մալուխ): Մասնագետների կարծիքով, Ջրվեժում տեղակայված անտենան կարող է ապա-

հովել IP-կապ` 2 մեգաբիթ/վայրկյան արագություն: Այսօր չկան տեղեկություններ այն մասին, թե ինչպես է օգտագործվում այդ ամտեման:

Այսպիսով, կարելի է պնդել, որ *Հայաստանն ունի որոշակի ռեսուրսներ IP-կապի սեփական տարրական կարիքները հոգալու համար: Սակայն դրանց օգտագործման վերաբերյալ միասնական քաղաքականության բացակայությունը խանգարում է Հայաստանում ինտերնետի զարգացմանը:*

Պետք է ավելացնել, որ ցանկացած ինտերնետ-պրովայդեր (վճարովի ինտերնետ-ծառայություններ մատուցող) ընկերություն, այնուամենայնիվ, կարող է տեղադրել արբանյակային ամտեմա և մուտք ունենալ ինտերնետ` շրջանցելով «Արմենտելը»: Հայաստանում գործող օտարերկրյա մի շարք ընկերությունների ներկայացուցչություններ այդպես էլ վարվում են: Այսպիսով, *ակնհայտ է, որ «Արմենտելի» մենատիրությունն ուղղված է ոչ թե ռեսուրսների կենտրոնացմանը` տեղեկատվական անվտանգության տեսակետից, այլ, ամենայն հավանականությամբ, նպատակ ունի ապահովել գերշահույթ:*

4.2 Տեղեկություններ ՀՀ ինտերնետ ընկերությունների վերաբերյալ

Այսօր Հայաստանում գործում են բավարար քանակի ինտերնետ-ընկերություններ: Ստորև ներկայացնում ենք նրանցից մի քանիսի համառոտ նկարագրությունը.

ARMINCO. Հայաստանի խոշորագույն ինտերնետ-պրովայդերն է: Տիրապետում է կաբելային միացումների (այդ թվում` մայրաքաղաքը ՀՀ մարզերի ու ԼՂՀ-ի հետ կապող) ճյուղավորված ցանցի և AirNet Arlan սարքերի միջոցով ինտերնետ մուտք ունենալու ռադիոցանցի: Ունի ներկայացուցչություններ Հայաստանի քաղաքներում և Ստեփանակերտում: Ունի անունների առաջնային սերվերի կարգավիճակ` ազգային ինտերնետ-դոմեյնի (.am) համար:

WEB խոշոր պրովայդեր է: Տեր է կաբելային հաղորդակցական ուղիների (այդ թվում տարածված Հայաստանի մի շարք մարզերում), ինչպես նաև լայն ճյուղավորում ստացած ռադիոցանցի (հիմնված Cylink մոդեմների և AirNet Arlan տեսակի սարքերի վրա):

ACC խոշոր պրովայդեր է, **ARPI** ցանցի նախածեռնող: Ունի մի շարք

կաբելային գծեր (որոնք ընդգրկում են նաև Հայաստանի առանձին շրջաններ) և AirNet Arlan տեսակի սարքերի միջոցով դեպի ինտերնետ մուտքի հնարավորություն ունեցող ռադիոցանց: Ջբաղվում է նաև ինտերնետային և համակարգչային ազգային ռեսուրսների ստանդարտացմամբ ու հայկականացմամբ:

FreeNet. անվճար համակարգ (էլ. փոստ, մուտք դեպի բացառապես հայաստանյան ինտերնետ-ռեսուրսներ): Թեև Հայաստանում բաժանորդների թվով անվիճելի առաջնորդ է, սակայն չունի քիչ թե շատ որակյալ սպասարկում: Ջարգանում է քառասար: Ստեղծվել է 1998թ. UNDP-հովանավորությամբ` ինտերնետի զարգացման ՄԱԿ-ի ռազմավարության շրջանակներում: Ունի սեփական (UNDP-ի շնորհած) ընդունիչ-հեռարձակիչ անտենա:

NetSys. ոչ մեծ, սակայն բավականին արագ զարգացող պրովայդեր է: Սակայն օրերս նա փակվեց Արմենթելի կամայականության հետևանքով:

CorNet. նոր ընկերություն է: Գտնվում է զարգացման սկզբնական փուլում: Առաջարկվող ծառայությունների տեսականին` տիպական այդ կարգի ընկերությունների համար:

Intarnet. ոչ մեծ ընկերություն է, հիմնադրվել է տիրահաշակ Infocom ընկերության մի շարք նախկին աշխատակիցների կողմից: Ինտերնետից և նրա հետ առնչություն ունեցող ծառայություններից բացի, զբաղվում է նաև արբանյակային կապով:

Dolphin. փոքր ընկերություն է: Հիմնականում զբաղված է համակարգչային տեխնիկայի մատակարարմամբ, վաճառքով և սպասարկմամբ: Ինտերնետ-ծառայությունները հանդիսանում են ավելի շուտ «կողմնակի» բիզնես:

Infocom (նույն ինքը Armencell). Մի քանի տարի առաջ օգտվում էր Հայաստանի կապի նախարարության և անձամբ նախարար Պողոսատյանի աննախադեպ օժանդակությունից: Նույնիսկ տիրապետում էր որոշակի բացառիկ իրավունքների` ինտերնետ-ծառայությունների առաջարկման բնագավառում: Ջբաղվում էր նաև տվյալների բանկային փոխանակման համակարգերով: Տերն էր "Искра" հեռախոսային ցանցին, զբաղվում էր էլեկտրոնային սարքավորումների վերանորոգմամբ: Աշխատանքի համար հիմնականում օգտագործում էր «X.25» տվյալների փաթեթային փոխանցման հնացած արձանագրությունը: Ներկայումս դարձել է կասկածե-

լի որակի ինտերնետ-ծառայություններ առաջարկող պրովայդեր: Բայց, այնուամենայնիվ, նախկինի նման օգտվում է կապի նախարարության բավարար հովանավորությունից և «Արմենտելի» բարյացակամ վերաբերմունքից: Չի բացառվում, որ ոչ շատ հեռու ապագայում «Արմենտելը» իր ինտերնետ-բիզնեսի մի մասը կփոխանցի Infocom-ին:

Չնայած պրովայդերների բազմությանը, Հայաստանում ինտերնետ-ռեսուրսների մակարդակը, ընդհանուր առմամբ, գտնվում է սաղմնային վիճակում: Չկա զարգացման միասնական հայեցակարգ: Չկա անգամ հայկական տառատեսակների համար համընդհանուր ընդունելի կոդավորման ստանդարտ. գործածության մեջ են մի քանի տարբերակներ, որոնք հաճախ բերում են հայերեն լեզվով «գրված» web-էջերի անընթեռնելիություն: Բացակայում են այսպես կոչված ինտերնետ-խանութները և ինտերնետի միջոցով ֆինանսական հաշվարկների համակարգերը (Հայաստանի տարածքում ինտերնետի միջոցով ոչ մի կրեդիտ/դեբիտորական քարտերի, այդ թվում և բուռն կերպով զուգադրված Armenian Card (ArCa)-ի, օգնությամբ ոչինչ հնարավոր չէ ձեռք բերել):

Ամբողջությամբ բացակայում է ինտեգրացիան ինտերնետ-ռեսուրսների և բջջային հեռախոսացանցի միջև: Աշխատանքի համար օգտագործվող ծրագրային ապահովման ինտերնետ-հանգույցների մեծ մասը չեն համապատասխանում տեղեկատվության անվտանգության տարրական չափանիշներին:

Անհանգստություն է առաջացնում այն հանգամանքը, որ Հայաստանում չկա միասնական հեռահաղորդակցական դաշտ: Նույնիսկ Երևանի մեջ հաղորդագրությունները մեկ պրովայդերից մյուսը կարող են հասնել ժամերի ընթացքում կամ ընդհանրապես չհասնել: Ըստ էության, անցած տասը տարիներին հայաստանյան ինտերնետ-պրովայդերները այդպես էլ չկարողացան իրար մեջ պայմանավորվել հանրապետության տարածքում միասնական տեղեկատվական դաշտի ապահովման վերաբերյալ: Ընդհանուր առմամբ, այդպիսի «ցրվածությունը» չի նպաստում Հայաստանում ինտերնետի զարգացմանը և թույլ չի տալիս ադեկվատ կերպով հակազդել հեռահաղորդակցական ոլորտի մեծատիրոջ ոտնձգություններին:

Այսպիսով, Հայաստանում հունական «գործընկերների» ձեռքին է մնում պետության կողմից տեխնիկապես չվերահսկվող միակ-եզակի անջատի-

չը: Հայաստանում հեռահաղորդակցական համակարգերի անկախությունը կարող է ապահովել միայն «Արմենտելի» կարգավիճակի վերանայումը: Դրան կարող է նպաստել նաև ինտերնետ-ծառայությունների ոլորտում աշխատող տեղական բոլոր ընկերությունների համախմբումը:

4.3 Համակարգչայնացումը և անվտանգությունը տեղերում

Վերջին տասը տարում զանազան միջազգային (գլխավորապես ամերիկյան) «ժողովրդավարեցնող» կազմակերպությունների կողմից հատկացված «օգնության» շրջանակներում Հայաստանի պետական կարևորագույն հաստատությունները ստացել են համակարգչային տեխնիկայի մեծ խմբաքանակ: Երբեմն մրցութային հիմունքներով կազմակերպվում էին տեխնիկայի գնումներ տեղական մատակարարողների շրջանում: Բայց, շատ հաճախ տեխնիկան, որը հոգատարորեն ծրագրավորված էր («գործի էր գցված») և լի ամենատարբեր ծրագրերով, անգամ դեպի ինտերնետ մուտք ունենալու նախօրոք վճարված հնարավորությամբ, ժամանում էր անմիջապես արտերկրի «մարդասիրական» կազմակերպություններից: Իսկ որոշ դեպքերում տեխնիկան պարզապես “second hand” էր: Նվիրված ձիու ատամները չեն ստուգում: Սակայն... Ինչքանով է լուրջ՝ այն սպառնալիքը, որ վերոհիշյալ ձին չի կարող լինել տրոյական:

Առաջին տարին չէ, որ լրտեսական պատմությունները ցնցում են բարձր տեխնոլոգիաների աշխարհը: Հիշողության մեջ դեռ թարմ են Ֆրանսիայի պաշտպանության նախարարի հայտարարություններն այն մասին, որ Microsoft, Lotus, Netscape և այլ կորպորացիաների հանրահայտ ծրագրային արտադրանքները պարունակում են որոշակի սողանցքեր՝ գլոբալ հետախուզական անգլո-ամերիկյան «էշելոն» ցանցի հետ «համագործակցության» և «զավթված» էլեկտրոնային ուղերձների կողագերծման համար:

Ընդամենը մեկ տարի առաջ Գերմանիայի Արտաքին գործերի և Պաշտպանության նախարարությունները հրաժարվեցին Microsoft Windows հանրահայտ օպերացիոն համակարգի օգտագործումից՝ կասկածելով, որ այն կարող է պարունակել էլեկտրոնային ուղերձների կողագերծման համար նախատեսված «ԱԱԳ-ի բանալին»: Մշտապես հրապարակվում են նյութեր այն մասին, թե որքանով է «համակարգիչ+ինտեր-

նետ» զուգակցությունը խոցելի տեղեկատվության անվտանգության տեսանկյունից:

Հայտնի է, որ չկա ծուխ առանց կրակի: Տեղեկատվության անվտանգության հարցը կարիք ունի լուրջ ուսումնասիրության: Առավել ևս, որ

1. Պետական կարևոր հաստատությունների համար նախատեսված համակարգչային և հաղորդակցական տեխնիկան (հատկապես զանազան միջազգային կազմակերպությունների կողմից «նվիրվածները») տեղերում տեղադրվում են առանց վերահսկողության:

2. Ծրագրային ապահովումը չի համապատասխանում պետական կառույցների համար նախատեսված անվտանգության ստանդարտներին:

3. Օգտագործվող էլեկտրոնային և հաղորդակցական սարքավորումը չի երաշխավորում վստահելիության ու անվտանգության անհրաժեշտ մակարդակ՝ հաշվի առնելով հատուկ ծառայությունների ոլորտի առկա տեխնիկական վերջին ձեռքբերումները:

4. Չի ապահովվում անվտանգության անհրաժեշտ աստիճան՝ ինտերնետի հետ աշխատանքի ժամանակ:

Այսպիսով, անհրաժեշտ է խիստ վերահսկողություն սահմանել պետական մարմիններում ստացվող ու օգտագործվող սարքավորումների և ծրագրային ապահովման նկատմամբ: Ինչպես նաև առկա է հեռահաղորդակցական համակարգերի արդիականացման և ստուգման անհրաժեշտություն՝ կապված հավանական գաղտնալսման հետ:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ այս ամենի մասին հոգալը տեղեկատվական անվտանգության հայեցակարգի նպատակ է: Այդ հայեցակարգում, անկախ նրա գաղափարախոսական դրույթներից, անպայման տեղ պետք է գտնեն այն տարրերը, որոնք բերված են հետազոտության հաջորդ բաժնում:

Տեղեկատվական անվտանգության հայեցակարգի տարրեր

Ինչպես նշեցինք նախորդ ենթաբաժնում, տեղեկատվական հարձակողական բնույթի գործողությունների, հետևաբար և տեղեկատվական անվտանգության հիմքում ընկած են տվյալ երկրի ռազմաքաղաքական ռազմավարությունը, նրա նպատակները:

Ելնելով այս դրույթից, ընդհանրացված, սխեմատիզացված տեսքով այդ տեղեկատվական անվտանգության *հիմնական նպատակներն են.*

- Հայաստանի ազգային շահերի պահպանումը տեղեկատվական գործընթացների աննախադեպ զարգացման, համաշխարհային տեղեկատվական ցանցերի ձևավորման և զարգացած երկրների տեղեկատվական գերազանցության ձգտման պարագայում:

- Պետական իշխանության և կառավարման մարմինների, ձեռնարկություններին և քաղաքացիներին ճշգրիտ, ամբողջական և ժամանակին տեղեկատվությամբ ապահովելը, ինչը անհրաժեշտ է որոշումներ ընդունելու, ինչպես և սեփական տեղեկատվական ռեսուրսները պահպանելու և նրանց անօրինական օգտագործումը կանխարգելու համար:

Տեղեկատվական անվտանգության *հիմնական խնդիրներն են.*

- Գոյություն ունեցող ինֆոգեոմ վտանգների և նրանց աղբյուրների հայտնաբերումը, գնահատումը և հնարավոր ինֆոգեոմ վտանգների կանխատեսումը:

- Տեղեկատվական անվտանգության ապահովման պետական քաղաքականության, ինչպես նաև այն իրականացնելու մեխանիզմների մշակումը:

- Տեղեկատվական անվտանգության ապահովման համար անհրաժեշտ իրավական հիմքերի, այդ բնագավառում պետական և ոչ պետական մարմինների կոորդինացիայի մեխանիզմների մշակումը:

- Գլոբալ տեղեկատվական համակարգերի և ցանցերի ստեղծման ու զարգացման գործընթացներին Հայաստանի մասնակցության ապահո-

վումը.

- Տեղեկատվական համակարգի զարգացումը, նրա կազմակերպման ձևերի կատարելագործումը, ինֆոգեն վտանգների կանխումն ու տեղեկատվական ազդեցությունների հետևանքների վերացումը:

Տեղեկատվական անվտանգության *օբյեկտներ են հանդիսանում*

- Տեղեկատվական ռեսուրսները, որոնք պարունակում են պետական կամ կոմերցիոն գաղտնիք, և այլ տեղեկատվական ռեսուրսները, որոնք բաց են և պարունակում են գիտելիքներ, անկախ նրանց պահպանման ձևերից:

- Տեղեկատվական ենթակառուցվածքները՝ այդ թվում տեղեկատվության մշակման և վերլուծության կենտրոնները, տեղեկատվության փոխանակման և հեռահաղորդակցման խողովակները, ինտերնետային ցանցերը, ինրպես նաև տեղեկատվության պահպանման համակարգերը և միջոցները:

- Տեղեկատվական ռեսուրսների ձևավորման, գործունեության, տարածման և օգտագործման համակարգը, որն ներառում է տարբեր կարգի տեղեկատվական համակարգեր՝ գրադարաններ, արխիվներ, տվյալների շտեմարաններ և այլ հաստատություններ (այդ թվում նաև այդ համակարգը սպասարկող անձնակազմը):

- Հասարակական գիտակցության և հոգևոր աշխարհի ձևավորման (աշխարհընկալման, քաղաքական հայացքների, բարոյական և ազգային արժեքների, գաղափարախոսության, մշակութային և էսթետիկ դիրքորոշման) համակարգը, որի հիմքում դրված են քարոզչության և զանգվածային լրատվության աղբյուրները:

- Քաղաքացիների, իրավաբանական անձանց և պետության իրավունքը տեղեկատվություն ստանալու, տարածելու և օգտագործելու, այդ տեղեկատվության կոմֆիդենցիալության և ինտելեկտուալ սեփականության պաշտպանությունը:

- Այն անհատները, կազմակերպությունները, ուսումնական և գիտական հաստատությունները, պետական հիմնարկությունները, որոնք տեղեկատվության, գիտելիքների և տեխնոլոգիաների, ազգային գաղափարների, հոգևոր և մշակութային արժեքների, ազգային ավանդույթների կրողներն են:

Այս վերջին կետը կարիք ունի առանձնահատուկ մոտեցման, քանի որ

այն, որպես կանոն, դուրս է մնում քննարկումներից: Սույն ուսումնասիրության նախաբանում շեշտվել էր, որ տեղեկատվական անվտանգության հիմքում դրված է *հասարակության ընդհանուր գիտելիքների տեսակարար կշիռը, նրա ինտելեկտուալ հնարավորությունները*, ինչը պետության, ազգի մրցունակության ամենաարդիական չափանիշը և հարատևման գրավականն է: Անհրաժեշտ է նշել, որ այս չափանիշով ՀՀ – ն սկսել է զգալիորեն զիջել ոչ միայն տնտեսապես զարգացած երկրներին, այլ իր ամնիջական հարևաններին՝ Վրաստանին և Ադրբեջանին: Եվ դա այն պարագայում, որ ԽՍՀՄ-ում մեր հանրապետությունը անհամեմատ առաջավոր դիրքեր ուներ այդ ոլորտում, այսինքն 1991-ին ՀՀ-ն գտնվում էր էապես ավելի նպաստավոր մեկնարկային պայմաններում: Համաձայն միջազգային ՏԱՍԻՍ կազմակերպության տվյալների, 2000 թվականին պետբյուջեից ՀՀ-ում գիտական աշխատանքների համար տրամադրվել է \$1.5 մլն, Վրաստանում՝ \$4.5 մլն, իսկ Ադրբեջանում՝ \$12 մլն: Սակայն գիտությունն այսօր ֆինանսավորվում է ոչ միայն պետբյուջեից, այլ ուրիշ աղբյուրներից՝ գրանտներ, նախագծեր և այլն: Այս տեսակետից նույնպես ՀՀ-ն զգալիորեն հետ է մնացել: Նույն 2000թ. այլ աղբյուրներից Հայաստանի գիտությունը ստացել է \$2,6 մլն, Վրաստանը՝ \$6.6 մլն., իսկ Ադրբեջանը՝ \$19 մլն: Մենք հետ ենք մնում նաև գիտական կոչումներ ունեցող գիտաշխատողների թվով, այն պարագայում, որ ԽՍՀՄ-ում Հայաստանը այդ չափանիշով գրավում էր առաջին տեղը:

Վատ է իրավիճակը նաև մշակույթի բնագավառում: 2000թ.-ին ՀՀ-ում թատրոն է այցելել 357 հազար մարդ, Վրաստանում՝ 508 հազար, Ադրբեջանում՝ 1 մլն: Գրադարաններում գրանցված ընթերցողները ՀՀ-ում կազմում են 721 հազար, Վրաստանում՝ 2 մլն 410 հազար, Ադրբեջանում՝ 3 մլն:

Այլ կազմակերպությունների վիճակագրական տվյալները վկայում են ներկայումս ՀՀ-ում 1991թ.-ի համեմատ վաճառվող գրքերի թվաքանակի զգալի նվազման, ՋԼՄ-ների ընդհանուր վարկանիշների անկման (օրինակ՝ տպագիր ՋԼՄ- ներին վստահում են ընթերցողների 3-5 % -ը, անհամեմատ իջել են նույն այդ թերթերի և ընդամենը մի քանի անուն ամսագրերի տպաքանակները և այլն, և այլն):

Մեկնաբանությունները մեծան վիճակագրության առիթով՝ ավելորդ են: Անհրաժեշտ է նաև հստակեցնել տեղեկատվական համակարգի պաշտպանության ներքին և արտաքին ինֆոգեն սպառնալիքները.

Արտաքին սպառնալիքների թվին են պատկանում.

- Ոչ բարեկամական պետությունների քաղաքականությունը գլոբալ տեղեկատվական մոնիտորինգի, տարածման և նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում:
- Արտասահմանյան հատուկ և հետախուզական ծառայությունների գործունեությունը:
- Արտասահմանյան քաղաքական և տնտեսական կառույցների գործունեությունը՝ ուղղված ՀՀ-ի շահերի դեմ:
- Միջազգային հանցագործ, աղանդավորական խմբերի և ցանցերի գործունեությունը:
- Տարերային և տեխնոգեն աղետները:

Ներքին սպառնալիքների թվին են պատկանում.

- Քաղաքական և տնտեսական կառույցների հակաօրինական գործունեությունը տեղեկատվության ձևավորման, տարածման և օգտագործման բնագավառում:
- Պետական կառույցների հակաօրինական գործունեությունը, որը հանգեցնում է քաղաքացիների իրավունքների ոտնահարմանը տեղեկատվություն ստանալու և օգտագործելու ոլորտում:
- Տեղեկատվության հավաքի, մշակման և տարածման նախապես մշակված կարգի խախտումները:
- Տեղեկատվական համակարգի սպասարկման անձնակազմի կանխանտաժված և ոչ կանխանտաժված սխալները:
- Տեղեկատվության հավաքի, մշակման և տարածման տեխնիկական միջոցների խափանումները:

Տեղեկատվական անվտանգության օբյեկտներին սպառնացող միջոցներն են՝

1. *Տեղեկատվական տիպի*
 - Տեղեկատվության փոխանակման ժամանակ հասցեների և ժամկետների խախտումը, տեղեկատվության հավաքի և օգտագործման օրենքների խախտումը:
 - Առանց համապատասխան սանկցիաների մուտքը դեպի տեղեկատ-

վական ռեսուրսները, տեղեկատվության մանիպուլիացիան, դեզինֆորմացիան կամ թաքցնելը:

- Տեղեկատվական համակարգերի տվյալների անօրինական պատճենահանումը:
- ՁԼՄ-ների օգտագործումը այնպիսի դիրքերից, որոնք հակասում են քաղաքացիների, կազմակերպությունների և պետության շահերին:
- Տեղեկատվության հափշտակումը գրադարաններից, արխիվներից, տվյալների շտեմարաններից:
- Տեղեկատվության մշակման տեխնոլոգիաների խախտումը:

2. Ծրագրային-մաթեմատիկական և ֆիզիկական:

- Վիրուսային և այլ տիպի վնասակար ծրագրերի ներմուծում:
- Տեղեկատվական համակարգերի տվյալների ոչնչացումը կամ մոդիֆիկացիան:
- Տեղեկատվության և կապի միջոցների ոչնչացումը:

3. Ռադիոէլեկտրոնային

- Տեղեկատվության տեխնիկական հափշտակումը՝ լսումը:

4. Կազմակերպչական-իրավական

- Հնացած և ոչ կատարյալ տեղեկատվական տեխնոլոգիաների գնումը:
- Տեղեկատվական ոլորտի իրավական-նորմատիվ օրենքների և կանոնների խախտումը:
- Քաղաքացիների և կազմակերպությունների համար կարևոր տեղեկատվական նշանակության ունեցող փաստաթղթերի մատչելիությունը անօրինական սահմանափակելը:

Անշուշտ, վերը բերված կետերը կարիք ունեն մշակման և դետալիզացիայի: Միևնույն ժամանակ, ցանկացած տեղեկատվական անվտանգության համակարգ պետք է այս կամ այն չափով անդրադառնա այդ հարցերի համախմբին կապելով դրանք կոնկրետ հանգամանքներին և իրողություններին:

Հետեվություններ եվ առաջարկություններ

Ինչպես հետևում է այս ուսումնասիրությունից, ՀՀ տեղեկատվական համակարգը դժվար է անվանել կայացած: Հատկապես անհանգստություն է պատճառում այն փաստը, որ համեմատական կարգով վերցրած մեր տեղեկատվական համակարգը այսօր գիջում է ոչ միայն միջազգային չափանիշներին համապատասխանող համակարգերին, այլ հաճախ նաև մեր անմիջական հարևանների՝ Վրաստանի և Ադրբեջանի համապատասխան համակարգերին: Դա հավասարապես վերաբերում է և՛ անձի, հասարակության հոգևոր տեղեկատվական պաշտպանության ոլորտին, և՛ տեղեկատվական-տեխնիկական միջոցներին:

Ակնհայտ է, որ տեղեկատվական համակարգի կատարելությունը անմիջականորեն կապված է պետության ընդհանուր իրավիճակի և ֆինանսական, վարչական հնարավորությունների հետ: Մինչև ժամանակ, անգամ սուղ հնարավորությունների պարագայում պետք է և կարելի է գտնել անհրաժեշտ նվազագույն միջոցներ՝ տեղեկատվական անվտանգության համակարգի բարելավման ուղղությամբ:

Անշուշտ, որպես առաջին քայլ այս ոլորտում անհրաժեշտ է մանրակրկիտ մշակել տեղեկատվական անվտանգության հայեցակարգը (որի պարտադիր և անհրաժեշտ տարրերի մի մասը ներկայացված է նախորդ բաժնում) և դրանից բխող օրենսդրական փաթեթը: Սակայն, մինչ այդ կարևորագույն փաստաթղթի ընդունելը դրությունը այս ոլորտում բարելավելու նպատակով հնարավոր է իրագործել գործնական քայլեր, որոնցից նշենք մի քանիսը:

6.1 Անհրաժեշտ միջոցառումներ հասարակության տեղեկատվական-լրատվական անվտանգության ոլորտում

1. ՀՀ ՁԼՍ-ների հրապարակումների և ցուցադրումների վերլուծություն

Ներկայիս ՀՀ տպագիր ՁԼՍ-ների տնտեսական իրավիճակը այնպիսին

է, որ նրանք կարիք ունեն շարունակական ֆինանսական օգնության: Շատ սակավ են այն թերթերը, որոնք ունեն այնպիսի տպաքանակ, որը թույլ է տալիս նրանց գոյատևել և առավել ևս զարգացում ապրել սեփական գործունեության շնորհիվ: Դա նշանակում է, որ մի շարք թերթեր ստվերային եղանակով ստանում են անհրաժեշտ միջոցներ՝ ստանձնելով հստակ պարտավորություններ՝ որոշակի տեսանկյունից լուսաբանել այս կամ այն երևույթը: Նման հրապարակումները ներկայացվում են որպես մամուլի ազատության արտահայտություն: Ակնհայտ է, որ միշտ չէ, որ նյութական աջակցություն ցուցաբերողների տեսանկյունները (որոնք, բացառված չէ, կարող են լինել և այլ պետությունների շահերի ներկայացուցիչներ), համընկնում են ՀՀ անվտանգության դրույթներին կամ շահերին: Նշենք նաև, որ քաջ հայտնի է, որ մի շարք երկրների և առաջին հերթին Թուրքիայի հատուկ ծառայությունները մեծ գումարներ են ծախսում այլ երկրներում մամուլը «զնելու» նպատակով:

Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է

- Ստեղծել կառավարական որևէ մարմնին կից ոչ մեծ մասնագիտական խումբ, որը պետք է իրագործի ՀՀ մամուլի ուսումնասիրություն և ներկայացնի կառավարական մարմնին ՀՀ-ում լույս ընծայվող թերթերի ամենաբացառիկ վերլուծությունները տեղեկատվական անվտանգության տեսանկյունից:

- Նման մոնիտորինգի հետևանքով ի հայտ բերված այն հրատարակությունները, որոնք չեն բավարարում տեղեկատվական անվտանգության պահանջներին, ենթարկվում են ավելի մանրակրկիտ ուսումնասիրության, գուցե և այլ պետական հաստատությունների հետ համատեղ, հնարավոր ազդեցությունների աղբյուրները և մեխանիզմները ի հայտ բերելու նպատակով:

- Վերոհիշյալ մեխանիզմների բացահայտումը հնարավոր կդարձնի մշակել գործողությունների այն համախումբը, որը թույլ կտա խուսափել մեծ բարդություններից, հաշվի առնելով, որ լրագրերը, լրագրողական կոլեկտիվները նույնպես տեղեկատվական անվտանգության սուբյեկտ են և իրենցից ներկայացնում են տեղեկատվական արժեք, չխախտելով մամուլի ազատության օրենքը՝ փոխել տվյալ լրատվական միջոցի կողմնորոշումը:

- Ստեղծել ոչ մեծ մասնագիտական խումբ, որը պետք է իրագործի ՀՀ

ռադիոհեռուստատեսային հաղորդումների բովանդակային վերլուծությունը և ներկայացնի կառավարական մարմին՝ նրանց վերաբերյալ վերլուծությունները տեղեկատվական անվտանգության տեսանկյունից:

Այս ոլորտում, բացի վերը նշված հանգամանքներից, առանձնապես էական է գովազդ պատվիրող կոմերցիոն և միջազգային որոշ կազմակերպությունների ազդեցությունը: Բոլոր պարագաներում բացահայտվող տեղեկատվական անվտանգությունը խախտող ռադիոհեռուստամիջոցները վերցվում են պետական վերահսկողության տակ և մշակվում են գործողություններ՝ ստեղծված վտանգները վերացնելու նպատակով:

2. Թեմատիկ խրախուսական քաղաքականության ձևեր

Ներկայումս ՀՀ ՁԼՍ-ներում նկատվում է հստակ միտում՝ ազգային-հոգևոր հայրենասիրական թեմաներով նյութերի, լինեն դրանք տպագիր կամ հեռուստատեսային, նվազում՝ ի հաշիվ այլ կարգի նյութերի: Կառավարական մարմինը, ելնելով վերլուծական խմբի մշակած նախագծերից, գուցե և ոչ ուղղակիորեն, այլ միջնորդված ձևերով, սկսում է համակարգված խրախուսման քաղաքականություն վարել՝ ազգային-հոգևոր հայրենասիրական թեմաներով հրապարակումների և հաղորդումների ի հայտ գալուն և այդ թեմատիկայի զարգացման ուղղությամբ:

3. Սփյուռքի տեղեկատվական արտադրանքի էլեկտրոնային տեսքով ընդունման և պահպանման քաղաքականության մշակում

3.1 Վերլուծական խումբը ստեղծում է *պետական* ինտերնետային պորտալ, որի միջոցով, վարելով հետազոտական աշխատանք (Սփյուռքի մեզ համար անհայտ տեղեկատվական արտադրանքի հայտնաբերման ուղղությամբ) և քարոզչական քաղաքականություն, համագործակցելով ՀՀ գրադարանների և արխիվների հետ, սկսում է էլեկտրոնային տեսքով ստանալ Սփյուռքի տեղեկատվական արտադրանքը՝ գրքեր, մամուլ կամ այլ տիպի տեղեկատվության կրողներ:

3.2 Վերլուծական խումբը (նույն *պետական* ինտերնետային պորտալի) համագործակցելով ՀՀ գրադարանների և արխիվների հետ, սկսում է էլեկտրոնային տեսքով ուղարկել ՀՀ-ից Սփյուռք տեղեկատվական արտադրանքը՝ լինեն դրանք գրքեր, մամուլ կամ այլ տիպի տեղեկատվության կրողներ:

6.2 Անհրաժեշտ միջոցառումներ տեղեկատվական-համակարգչային ինտերնետ անվտանգության բնագավառում

1. Տեղեկատվական կարևորագույն հանգույցների սերտիֆիկացիա

Ինչպես հայտնի է, ներկայումս Եվրոպայում ընդունված է տեղեկատվական համակարգերի անվտանգության ISO 15408 ստանդարտը: Այդ ստանդարտի հիման վրա Ռուսաստանում մշակում են սեփական ստանդարտը՝ ԹԿԻՁ Հ ԼԿԿ/ՕՆԻՍ 15408. ՀՀ-ում, որպես առաջին քայլ, տեղեկատվական կարևորագույն հանգույցները կարելի է սերտիֆիկացիայի ենթարկել՝ հիմնվելով նրանց համապատասխանությանը այդ ստանդարտներին: Որպես հաջորդ քայլ՝ անհրաժեշտ է ստեղծել սեփական ազգային ստանդարտը այդ բնագավառում: Նկատենք, որ նման աշխատանքների համար կարելի է ստանալ ֆինանսավորում ԵԵՄ-ից:

2. Հաղորդվող տեղեկատվություն մուտք ունենալու համար սեփական սարքերի տեղադրում

Ներկայումս Հայաստան մտնող և դուրս ելնող տեղեկատվության ինտերնետային հոսքերը (տրաֆիկը) չեն վերահսկվում: Բացակայում են հաղորդումների ընտրովի զավթման և հնարավոր մուտքերի վերահսկման միջոցները: Դա հնարավորություն է տալիս էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկել և ստանալ ցանկացած բնույթի տեղեկատվություն: Նկատենք, որ ՌԴ-ում հասկացել են նման իրադրությունից բխող վտանգները և ՖՍԲ-ն պարտադրել է բոլոր խոշոր ինտերնետ ընկերություններին իրեն տրամադրել որոշակի տվյալներ: Անշուշտ, ինտերնետի վրա տոտալ վերահսկողություն սահմանելը բարդ է, եթե ոչ՝ անհնար: Սակայն, առանձին վերցրած հիմնարկությունների մակարդակով իշխանությունները պարտավոր են ունենալ օպերատիվ արձագանքելու հնարավորություն տեղի ունեցող արտահոսքերի և խակերային հարձակումների պատճառով:

Բացի դրանից, պետական և ռազմական կառույցները պետք է ունենան սեփական ինտերնետային կապի միջոցներ, քանի որ «Արմենտել» իր կապի պաշտպանվածության երաշխիքները չի կարող ապահովել:

3. Ոչ ֆունկցիոնալ տարրերի բացահայտման նպատակով տեղեկատվական և հեռարձակման տեխնիկական միջոցների ստուգումը: Այդ տեխնիկական միջոցներում հաղորդող սարքերի բացահայտման նպատակով հատուկ դետեկտորի կիրառումը: Էքստրենալ պայմաններում գրասենյակային (օֆիսային) տեխնիկայի օգտագործումից հրաժարվելը:

Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է ներգրավել արհեստավարժ մասնագետներ, և օգտագործել հատուկ տեխնիկական միջոցներ պետական կարևոր կառույցների և ռազմական կարիքների համար ներկրվող համակարգչային տեխնիկական ստուգելու նպատակով: Ձուգահեռաբար պետք է սահմանափակել ներկայումս ընդունված, ըստ էության «կենցաղային» հաշվիչ տեխնիկայի օգտագործումը կրիտիկականին մոտ կամ կրիտիկական պայմաններում: Օրինակ, ՀՀ Ձինուժի Կենտրոնական հրամանատարության համակարգում տեղադրված համակարգիչները «օֆիսային» են, և երբ խախտվում են նրանց օգտագործման համար նախատեսված իդեալականին մոտ պայմանները, նրանք պետք է փոխարինվեն հատուկ պատվիրված տեխնիկայով և անհրաժեշտ ստուգումներից հետո միայն՝ օգտագործվեն գինվորական գործում:

4. Չփաստաթղթված ֆունկցիաների բացահայտման նպատակով ծրագրային սպասարկման՝ ծրագրերի, հետազոտությունը: Իրենց անհուսալիությունը ցուցաբերած ծրագրերից հրաժարումը (այդ կատեգորիայի մեջ են մտնում ներկայումս լայնորեն կիրառվող մի շարք ծրագրեր):

Անվտանգության տեսակետից կրիտիկական տեղեկատվական համակարգերում, առավել ևս, եթե նրանք ելք ունեն դեպի ինտերնետ, ցանկալի չէ օգտագործել Microsoft-ի արտադրության օպերացիոն համակարգերի կիրառումը: Գոյություն ունեն այլ ֆիրմաներ, որոնց արտադրանքը անվտանգության տեսակետից ավելի հուսալի է: Այդ նպատակով պետք է շարունակաբար վերլուծել իրադրությունը «ծրագրային շուկայում», հետազոտել այդ բնագավառում հայտնված նորությունները և ժամանակին կատարել ծրագրային փոփոխություններ այն տեղեկատվական համակարգերում, որտեղ անվտանգությունը կրիտիկական գործոն է:

5. Լոկալ ցանցի և ինտերնետ խողովակների ստուգումը հաղորդվող տեղեկատվության «կասկածելի» փաթեթների բացահայտելու նպատակով:

Կով:

Որոշ կոմերցիոն ծրագրեր, տեղադրելուց հետո, փորձում են «կապ հաստատել» իրենց արտադրողների հետ: Եվ չկա երաշխիք, որ նրանք հաղորդում են միայն լիցենզիոն կամ տեղադրման բնույթի տեղեկատվություն: Հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ լայնորեն օգտագործվող ծրագրերը ինտերնետի միջոցով ուղարկում են իրենց արտադրողներին համակարգված տեղեկատվություն այն համակարգչի մասին, որում տեղադրված են:

Նման հաղորդումների բացահայտումը բավական բարդ է, բայց ոչ անհնար: Գոյություն ունեն որոշակի տեխնոլոգիաներ, որոնք թույլ են տալիս ստուգել մնացած տեղեկատվական փաթեթները:

Օրինակ, լոկալ ցանցի ամեն մի մեքենայի վրա տեղադրվում է firewall տիպի ծրագիր, և եթե ինչ-որ ծրագիր փորձում է հարուցել IP կապուղու սեանս, ապա տեղադրված պաշտպանական ծրագիրը անմիջապես տեղեկացնում է, թե որ օգտագործվող ծրագիրը երբ և ում հետ է փորձել միանալ:

6. Բրանդմաուերների տիպի պաշտպանողական համակարգերի օգտագործումը Ինտերնետի հետ աշխատանքի անվտանգությունը ապահովելու նպատակով:

Այն ցանցերին, որոնց անհրաժեշտ է ապահովել մուտք դեպի ինտերնետ, հարկավոր է ապահովել անհրաժեշտ պաշտպանություն խակերային հարձակումներից և չսանկցավորված մուտքերից: Դա իրագործվում է, այսպես կոչված, *բրանդմաուերներով*, այսինքն հարմարանքներով, որոնք մեկուսացնում են լոկալ ցանցի հանգույցները ինտերնետից և իրենց միջով անցկացնում են ողջ տեղեկատվական հոսքը:

7. Լոկալ ցանցում գործող այն համակարգիչները, որոնցում պահվում են կարևոր տվյալներ, պետք է անջատված լինեն ինտերնետից:

Եթե անհրաժեշտություն է ծագում կարևոր տվյալներով համակարգիչը միացնել ցանցի այլ մեքենաների հետ, ապա դա հնարավոր է անել TP-Cross տիպի մալուխներով, կամ COM, LPT ախնխրոն պորտերի միջոցով: Տվյալների փոխանակման ժամանակ լոկալ ցանցը պետք է անջատվի ինտերնետից:

8. Ծածկագրերի սեփական համակարգի օգտագործումը տվյալների ծածկագրման համար:

Գոյություն ունեցող կոմերցիոն ծածկագրման միջոցներից և ոչ մեկը չի կարող երաշխավորել տվյալների բացարձակ անվտանգությունը: Մինևույն պարագայում ,մեծ հուսալիություն և մեծ գին ունեցող համակարգերը, հիմնված DES կամ RSA ալգորիթմների պաշտպանության վրա, ենթակա չեն արտահանվելու ԱՄՆ-ից: Այսինքն, այդ կարևոր հարցում ԱՄՆ-ը պահպանում է իր մենաշնորհը:

Այս ամենը վկայում է, որ տվյալների հուսալի պաշտպանության համար անհրաժեշտ է մշակել սեփական կրիպտոգրաֆական մեթոդներ:

9. Դիսկետների և և տեղեկատվության այլ կրիչների վերահսկումը:

Պետական և ռազմական նշանակության տեղեկատվական ցանցերում դիսկետները, այդ թվում լազերային կամ այլ տիպերի, օգտագործվում են անվերահսկելի ձևով: Դա զգալիորեն մեծացնում է և՛ մեքենաների վիրուսային վարակումը, և՛ տեղեկատվության հնարավոր արտահոսքը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է.

- Ցանցի բոլոր համակարգիչներից, բացի մեկից, հեռացնել տեղեկատվություն «կարդացող» համակարգեի:

- Մնացած մեկ համակարգիչի վրա տեղադրել հակավիրուսային հզոր համակարգ, միաժամանակ հատուկ նատյանում գրանցել բոլոր գործողությունները դիսկետների հետ:

Մի շարք դեպքերում անհրաժեշտ է հրաժարվել փակ ճարտարապետությամբ ծրագրերից և անցնել այն համակարգերին, որոնք նատչելի են ելքայիններում (օրինակ՝ FreeBSD, Linux), քանի որ այլ կերպ անհնար է ապահովագրվել զանազան «տրոյական ձիերից» և «մուտքի կետերից»:

Ներկայումս վերը նկարագրված քայլերը իրականացվում են մի շարք երկրներում, այդ թվում՝ Գերմանիայում այսպես կոչված «էշելոն» հետախուզական գլոբալ համակարգի (տեղեկատվության «զավթման» համար նախատեսված) աշխատանքի հետ կապված մի շարք լուրջ միջադեպերից հետո:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ.....	5
1.1. Տեղեկատվական գործողությունները անցյալում.....	5
1.2 Տեղեկատվական գործողությունները “Սառը պատերազմի” տարիներին.....	9
ԳԼՈՒԽ 2. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԼՈՐԱԼԻԶԱՑԻԱ	12
2.1 Տեղեկատվական հասարակություն.....	12
2.2 Գլոբալիզացիա.....	19
ԳԼՈՒԽ 3. ԻՆՖՈԳԵՆ ՍԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ.....	22
3.1 Տեղեկատվական պատերազմներ.....	23
3.2 Տեղեկատվական հարձակում մարդու գիտակցության վրա.....	28
3.3 Նոոքաղաքականություն և տեղեկատվական անվտանգություն.....	31
ԳԼՈՒԽ 4. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ (ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ) ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ	35
4.1 Հեռահաղորդակցական ծառայությունների մենատիրությունը և տեղեկատվական անվտանգությունը ՀՀ - ում.....	35
4.2 Տեղեկություններ ՀՀ ինտերնետ ընկերությունների վերաբերյալ.....	42
4.3 Համակարգչայնացումը և անվտանգությունը տեղերում.....	45
ԳԼՈՒԽ 5. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՏԱՐԻԵՐ.....	47
ԳԼՈՒԽ 6. ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	52
6.1 Անհրաժեշտ միջոցառումներ հասարակության տեղեկատվական - լրատվական անվտանգության ոլորտում.....	52
6.2 Անհրաժեշտ միջոցառումներ տեղեկատվական - համակարգչային - ինտերնետ անվտանգության բնագավառում.....	55

«ՆՈՐԱՎԱՆՔ» **ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ** **ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ**

Ժամանակակից աշխարհում սեփական ներուժի առավելագույն կենտրոնացումը, տարածաշրջանային և համաշխարհային հավասարակշռության համակարգերում կուտակված էներգիայի ռացիոնալ և նպատակային կիրառումը դառնում են ազգերի և պետությունների առջև ծառայած կենսական հիմնահարցեր:

Հայաստանն այսօր միջազգային ասպարեզում մրցունակ չէ բնական ռեսուրսների, տնտեսական ընդհանուր վիճակի, ֆինանսական համադրված կարողականության չափորոշիչներով: Փոխարենը հայկական գործոնն ուշագրավ և շահավետ դիրք է գրավում մտավոր ներուժի կարողականության կուտակման իմաստով: Մտավոր ներուժի կուտակման և ռացիոնալ կիրառման հիմնահարցը բանալի է հայ ժողովրդի՝ ժամանակակից աշխարհում սեփական ամբողջական ներուժի գնահատման, տեղի ու դերի, հնարավորությունների հստակեցման համար: Համահայկական կազմակերպված մտավոր ներուժը կոչված է դառնալու այն հզոր լծակը, որը Հայաստանին հնարավորություն կտա տեղ գրավել համաշխարհային գործընթացների վրա ազդելու կարողականություն ունեցող երկրների թվում:

Այսպիսով անհրաժեշտություն է դառնում հայկական շարունակականության մոդելի մշակումը, որը հայ ժողովրդի ամբողջական պոտենցիալի պահպանման ու զարգացման ծրագիրն է և իր առանձին բաղադրիչներով օրգանապես շաղկապված ամբողջություն է: Իրավիճակը և առաջիկա զարգացումների հրամայականն առաջնահերթ են դարձնում հիշյալ հիմնահարցը իրականացնելու կոչված, սկզբունքային առումով որակապես նոր միավորի ստեղծման անհրաժեշտությունը: Այդպիսին կարող է դառնալ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը, որն իրենից ներկայացնելու է գիտական, մշակութային, հոգևոր ներուժի կազմակերպման, համադրման, կառավարման և գործնական կիրառման մեխանիզմների մշակման կենտրոն:

Համաշխարհային փորձն ունի նմանատիպ կառույցների արդյունավետ աշխատանքի բազմաթիվ օրինակներ: Քաղաքակրթական մրցակցության

արդի փուլ զարգացած շատ երկրներ (Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ, ԳՖՀ, Գապոնիա, Իրան, Չինաստան) թևակոխում են տասնամյակների, երբեմն հարյուրամյակների պատմություն ունեցող այդպիսի հաստատություններով: Այս կենտրոնների վրա են դրվում պետության մտավոր ներուժի կազմակերպման, նորագույն գիտական մշակումների օգտագործման, գիտական կառավարման տեխնոլոգիաների մշակման, պետական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում դրանց կիրառմամբ, կադրերի պատրաստման և վերապատրաստման գործառույթները:

Այսպիսի հաստատությունների ձևավորման և արդյունավետ գործունեության հարուստ փորձ ունի նաև հայ ժողովուրդը: Պատմական շրջադարձային փուլերում, երբ առավել ցայտուն, երբեմն ավերիչ էին դրսևորվում քաղաքակրթությունների շփման և փոխազդեցությունների գործընթացները, ի հայտ եկան Նորավանքի, Սանահինի, Գլաձորի, Տաթևի, Սսի համալսարանները՝ որպես մտավոր ներուժի պահպանման, հոգևոր և մշակութային արժեքների հավաքման, կուտակման և վերարտադրման ազգային գեոֆունդի հետագա զարգացումն ապահովող կենտրոններ:

Հիմնադրամի հիմնական առաքելությունն է լինելու դառնալ այն փորձարարական կենտրոնը, որտեղից հայ իրականության ամենատարբեր ոլորտներ պետք է ձգվեն հայոց շարունակականությունն ապահովող ծրագրերն ու դրանց իրականացման մեխանիզմները: Այն միաժամանակ վեր է ածվելու միջազգային գիտահետազոտական և մտավոր կենտրոնի, որն ունակ կլինի արժանիորեն ներկայացնել մեր ժողովրդին համաշխարհային հանրությանը, դառնալով քաղաքակրթությունների լավագույն ձեռքբերումների համադրման և երկխոսության վայր:

Համալսարանի դասախոսներն ու սաները միջնադարի հայ ուսուցչապետերի օրինակով կդառնան հայկական ազգային նոր դպրոցի հիմնադիրներ, որոնք անկախ պետականության պայմաններում կլուծեն գլոբալ ներազդեցություններով թելադրված նոր խնդիրներ և առաջադրանքներ:

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Հիմնադրամն իրականացնելու է հետևյալ հիմնական գործառույթները.

- գիտական մտքի համախմբում,
- գիտահետազոտական գործունեություն,

- ռազմավարական հետազոտությունների իրականացում,
- մասնագետների պատրաստում և վերապատրաստում, կրթամեթոդական նոր մեխանիզմների մշակում և տարածում, տեղեկատվական ցանցի ստեղծում:

ա) Գիտական մտքի համախմբումը ներառում է հետևյալ խնդիրները՝

- համապատասխան մթնոլորտի ձևավորում, հանրապետության և արտերկրի առաջատար մտավորականների համախմբում, գիտական նորագույն մշակումների փոխանակում,
- գիտական կոնֆերանսներ, խորհրդակցություններ, քննարկումներ,
- գիտա-քաղաքական հետազոտություններ:

բ) Գիտահետազոտական հայեցակարգային աշխատանքներ՝

- պետության նպատակների և իրական հնարավորությունների գնահատում, զարգացման մոդելների ձևավորում,
- գործադաշտերի և գործամիջոցների հստակեցում,
- հայ ժողովրդի մարդկային, նյութական և հոգևոր կարողության «գույ-քագրում» չորս միջոցներով՝ մարդկային, կազմակերպական, ֆինանսական և հոգևոր (մշակութային, քաղաքակրթական),
- հասարակության միասնության մոդելի կառուցում, որի հիմքում կընկնեն տարբեր գաղափարական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրոնական, մշակութային ուղղվածություն ունեցող միավորների գործունեության համակարգումը և հասարակական համաձայնության առկա հիմնախնդիրների հստակեցումը,
- հետազոտությունների արդյունքների կիրառման մեխանիզմների ճշտում,
- կոնկրետ արդյունքների գործադրման առաջարկությունների ներկայացում:

գ) Ռազմավարական հետազոտությունների իրականացում՝

- ռազմավարության և առաջնահերթությունների ճշտում,
- կոնկրետ նպատակներ հետապնդող ծրագրերի մշակում,
- տարբեր ոլորտներում գործող ծրագրերի և նրանց գործադրման ժամանակացույցերի համադրման մեխանիզմների ձևավորում,
- մարտավարական նշանակության խնդիրների առանձնացում և դա-

սակարգում,

- յուրաքանչյուր ծրագրի ենթատեքստում հնարավոր համախոհ և հակադիր ուժերի տեղաբաշխման քարտեզի կազմում և գործունեության մեխանիզմների ճշգրտում,
- պետական անվտանգության բոլոր չափումներից բխող հատուկ ծրագրերի մշակում, վերջինիս արդյունքում պետական պատվերի մշակում և իրականացման մեխանիզմների ճշգրտում,
- պետական կառավարման օպտիմալ համակարգերի մոդելավորում:

դ) Կրթամեթոդական աշխատանքներ և տեղեկատվական ցանցի ստեղծում՝

- հիմնադրամի իրականացրած հետազոտությունների հիման վրա մեթոդաբանական աշխատանքների իրականացում,
- դասախոսների և ուսանողների վարժանքի (training) ծրագրերի իրականացում,
- կրթական նոր մեխանիզմների մշակում և տարածում գիտակրթական հաստատություններում,
- տարբեր ոլորտների մասնագիտական կադրերի պատրաստում և վերապատրաստում,
- տեղեկատվական-քարոզչական ցանցի հայեցակարգի մշակում,
- քարոզչական համադրման մեխանիզմների ձևավորում,
- համալսարանի իրականացրած աշխատանքների մատուցում հանրությանը,
- հանրությանը մատչելի գրադարանի, համակարգչային ծրագրերի ստեղծում,
- գիտական նորագույն մշակումներին հանրության ծանոթացում:

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՌԱՋԻԿԱ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների ոլորտը կարելի է բնութագրել որպես հայագիտություն, որի բովանդակությունն արդի փուլում էապես ընդլայնվել է, ներառելով մի շարք հասարակական գիտությունների (սոցիոլոգիա, քաղաքագիտու-

թյուն, պատմություն, փիլիսոփայություն, ազգագրություն, մշակութաբանություն, հոգեբանություն և այլն) հատույթում գտնվող հարցադրումներ և դրանց համապատասխան լուծումներ: Եթե անցյալում հայագիտության ուղղվածության վեկտորն ուղղված էր դեպի անցյալը, ապա ներկայումս սուր անհրաժեշտություն է զգացվում վեկտորի սլաքն ուղղել ապագային: Բացի այդ, առաջանում է հայագիտության բովանդակային նոր վեկտոր՝ միտված համակարգված մարտահրավերներին համարժեք պատասխաններ գտնելուն:

Անկախ պետականության պայմաններում հասարակության մեջ աստիճանաբար ձևավորվել է անհրաժեշտություն պարզաբանել, թե որո՞նք են մեր ազգային շահերը, նպատակները, առաջնահերթությունները 21-րդ դարում, ինչպիսի՞ ռազմավարություն և մարտավարություն է պահանջվում նրանց պաշտպանության համար երկրի ներսում և միջազգային ասպարեզում:

Այս իրողությամբ է պայմանավորված հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների թեմաների առաջնահերթությունը: Որպես հիմնական ընտրվեցին երկու փոխկապակցված հիմնախնդիրներ՝

- ա. Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում
- բ. Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ

«Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում» թեման ներառում է հետևյալ խնդիրների շրջանակը՝

- արդի գլոբալ գործընթացները և ազգային պետության գործառույթները,
- ազգային շահեր, նպատակներ, առաջնահերթություններ. էություն, բովանդակություն,
- հայկական շարունակականության հայեցակարգը,
- ազգային և պետական շահ ըմբռնումների փոխհարաբերակցությունը,
- ազգային պետությունը, քաղաքացիական հասարակությունը և ժողովրդավարությունը,
- ազգային համաձայնության և միասնականության գաղափարը որպես ազգային պետության ներքին կայունության և զարգացման գրավական, վերջինիս հասարակական, քաղաքական, տնտեսական, հոգևոր և

մշակութային ռեսուրսները,

- Հայոց Ցեղասպանության ճամաչումը և Պահանջատիրությունը որպես հայկական գործոնի կարևորագույն բաղադրամասեր,
- Հայրենիք-Սփյուռք առնչությունների մոդելավորման հիմնախնդիրները,
- Սփյուռքի ազգապահպանման գործոնները և հայոց անկախ պետականության գործառույթները,
- ՀՀ արտաքին քաղաքականության և ռազմական դոկտրինայի հիմնադրույթները,
- ազգային պետության կառուցման տնտեսական հիմնավորումները,
- գիտակրթական և մշակութային քաղաքականությունը որպես ազգային պետության ձևավորման կարևորագույն բաղադրամաս,
- անկախ պետականության զարգացման ուղիներն ու հեռանկարները 21-րդ դարում:

«Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ» թեման ներառում է խնդիրների հետևյալ շրջանակը.

- ազգային անվտանգության համալիր ծրագրի հիմնադրույթները,
- հազար-բարոյական անվտանգության հիմնադրույթներ,
- մշակութային անվտանգության հիմնադրույթներ,
- կրթական-դաստիարակչական անվտանգության հիմնադրույթներ,
- գիտատեխնիկական անվտանգության հիմնադրույթներ,
- տնտեսական (ֆինանսական) անվտանգության հիմնադրույթներ,
- կոմունիկացիոն անվտանգության հիմնադրույթներ,
- տեղեկատվական անվտանգության հիմնադրույթներ,
- բնապահպանական անվտանգության հիմնադրույթներ,
- ժողովրդագրական անվտանգության հիմնադրույթներ,
- առողջապահական անվտանգության հիմնադրույթներ,
- սահմանամերձ շրջանների անվտանգության հիմնադրույթներ:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ՝

Անդրանիկ Սարգսյան - ՀՀ Վարչապետ

Մանուկ Թովուզյան - ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Կարինե Կիրակոսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարարի տեղակալ

Լևոն Մկրտչյան - ՀՀ Կրթության և գիտության նախարար

Տիգրան Սարգսյան – ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ

Արա Ավետիսյան – ՀՀ Կրթության և գիտության նախարարի տեղակալ

Իրավաբանական հասցե՝

Երևան-10, Կառավարական տուն, 1

Գրասենյակի հասցե՝

Երևան, Գարեգին Նժդեհի, 23

Հեռ. 44-04-72, 44-04-73

Ֆաքս (374 1) 44-04-73

E-mail: noravank@arminco.com